ՀՈԴՎԱԾՆԵՐ СТАТЬИ

ՅՈԹՆԱՄՅԱԿԸ ՈՐՊԵՍ ՎՃՌԱԿԱՆ ՔԱՅԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ՎԵՐԵԼՔԻ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

Ա. Ե. ՔՈՉԻՆՅԱՆ

Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետի նախագահ

Սովետական Միության Կոմունիստական պարտիայի XXI համագումարը նշանակալից իրադարձություն էր մեր երկրի կյանքում։ ՍՄԿՊ XXI համագումարի պատմական որոշումները և նրա նշած կոմունիստական ծավալուն շինարարության փառահեղ ծրագիրը մեծագույն ուրախությամբ և գոհունակությամբ ընդունվեցին սովետական ժողովրդի և ողջ առաջադեմ մարդկության կողմից։ Համագումարի գաղափարները ու որոշումները գրավում են իրենց կենսահաստատ ուժով, նրանք ներգործում են համաշխարհային զարգացման ողջ ընթացքի վրա, ոգեշնչում բոլոր աշխատավորներին հանուն երջանիկ և ուրախ կյանքի սրանց մղած պայքարում։

ՍՍՌՄ զարգացման յոթնամյա պլանը՝ խաղաղ շինարարության պլանը, որ հաստատել է համագումարը, հանդիսանում է մեր երկրի լենինյան խաղաղասեր քաղաքականության արտահայտությունը։

Այս ծրագրի և բոլոր մյուս սոցիալիստական երկրների տնտեսական ծրագրերի իրագործմամբ, համաշխարհային սոցիալիստական սիստեմի երկրները կտան համաշխարհային արդյունաբերական արտադրանքի կեսից ավելին։

Նյութական արտադրության՝ մարդկային գործունեության այդ կարևորագույն ոլորտում կապիտալիզմի համաշխարհային սիստեմի նկատմամբ սոցիալիզմի համաշխարհային սիստեմի գերակշռությունն ապահովելը հսկայական դեր կխաղա ժամանակի արմատական հարցի լուծման՝ ընդհանուր խաղաղությունը պահպանելու գործում։ Ռեալ հնարավորություններ կստեղծվեն պատերազմը՝ որպես միջազգային հարցերի լուծման միջոց վերացնելու համար։

Յոթնամյա պլանի իրագործումը նոր ապացույց կհանդիսանա այն բանի, որ Սովետական Միության աշխատավորները կատարում են իրենց ինտերնացիոնալ պարտքը միջազգային բանվորական և կոմունիստական շարժման մեջ, ողջ առաջադեմ մարդկության հանդեպ։

Կոմունիզմի կառուցման վիթխարի ծրագրի ընդունումը մեր երկրում հնարավոր դարձավ շնորհիվ արտադրողական ուժերի զարգացման մեջ ձեռք բերված այն հսկայական հաջողությունների, որ հետևանք էին հասարակական կյանքի բոլոր ոլորտներում արմատական ռևոլյուցիոն վերափոխումների։

Սովետական ժողովրդի հերոսական պայքարի ու աշխատանքի ամենադլխավոր արդյունքը սոցիալիզմի կառուցումն է մեր երկրում։

Ինչպես մի հզոր ժայռ, անխախտ և հաստատուն կանգնած է Սովետական պետությունը, որը ստեղծել է և կառավարում է ինքը ժողովուրդը։ Մեր մեծ Հայրենիքը դարձել է ողջ առաջադեմ մարդկության ավանգարդում ընթացող, ամենահզոր սոցիալիստական տերությունը։

Տնտեսության և կուլտուրայի զարգացման այս մեծագույն հաջողությունների հիմքը հանդիսանում է այն, որ Հոկտեմբերյան Մեծ ռևոլյուցիայի հաղթանակի հետևանքով մեր երկրում հաստատված նոր սոցիալիստական կարգը ամենաառաջադիմականն է ու կատարյալը և հսկայական առավելություններ ունի կապիտալիզմի համեմատությամբ։

Սովետական կարգի ուժն ու հզորությունը մեր երկրի բանվորների ու գյուղացիների անխախտ միության մեջ է, մեր բազմազգ Հայրենիքի եղբայրական ժողովուրդների միաձույլ բարեկամության մեջ։

Բոլոր ժողովուրդների ու ազգությունների տնտեսության և կուլտուրայի բազմակողմանի ծաղկման նկատմամբ Կոմունիստական պարտիայի ցուցաբերած մշտական հոգատարության շնորհիվ, մեր երկրում, առաջին անգամ պատմության մեջ, լուծված է ժողովուրդների տնտեսական ու կուլտուրական անհավասարության վերացման խնդիրը։

Հին Ռուսաստանի՝ նախկինում ճնշված և տնտեսապես ու կուլտուրապես հետամնաց ծայրամասերը, ազգային քաղաքականության ճիշտ կենսագործման, ռուս մեծ ժողովրդի և երկրի բոլոր ժողովուրդների եղբայրական փոխադարձ օգնության շնորհիվ դարձել են առաջադեմ ինդուստրիալ-կոլտնտեսային սոցիալիստական ռեսպուբլիկաներ։

Սովետական ժողովուրդների համերաշխ ընտանիքում Սովետական Հայաստանը, հետամնաց ու քայքայված ծայրամասից վեր է ածվել ծաղկող սոցիալիստական ռեսպուբլիկայի՝ բարձր զարգացած (արդյունաբերությամբ), խոշոր մեքենայացված գյուղատնտեսությամբ, առաջադեմ կուլտուրայով։

Մեր ռեսպուբլիկայի հաջողությունները հանդիսանում են Հոկտեմբերյան ռևոլյուցիայի մեծ գաղափարների կենսականության, Կոմունիստական պարտիայի իմաստուն լենինյան ազգային քաղաքականության հաղթանակի վառ ապացույցը։

Հայտնի է, որ նախառևոլյուցիոն Հայաստանը հետամնաց ագրարային երկիր էր, թույլ զարգացած արդյունաբերությամբ։

Ալավերդում և Ղափանում կային պղնձարդյունաբերության սաղմերը միայն, և ձեռնարկություններն էլ հիմնականում պատկանում էին օտարերկրյա կոնցեսիոներներին։ Գոյություն ունեին նաև գինու-կոնյակի արտադրության, կաշվի մշակման և մետաղամշակման մի քանի մանր ձեռնարկություններ։

Իսկ օտարերկրյա իմպերիալիստների և նրանց գործակալների՝ դաշնակների տիրապետության տարիներին Հայաստանի ժողովրդական տնտեսությունը հասցվեց լիակատար քայքայման. հայ ժողովուրդը, որ տառապում էր սովից ու համաճարակներից, դաշնակցական ու թուրքական կամայականություններից, կանգնած էր ֆիզիկական բնաջնջման եզրին։ Ահա այս էր ժառանգություն ստացել Սովետական իշխանությունը Հայաստանում։

Սոցիալիստական շինարարության տարիներին Հայաստանում ստեղծվել է ժամանակակից տեխնիկայով հագեցված հզոր բազմաճյուղ արդյունաբերություն։ Բավական է ասել, որ 1958 թ. արդյունաբերական արտադրանքի ծավալը 1913 թ. համեմատությամբ ավելացել է 55 անգամ։ Անցած տարվա համախառն արտադրանքի միայն տարեկան աճը 5 անգամ ավել է 1913 թ. ողջ համախառն արտադրանքից։

Սովետական Հայաստանի արդյունաբերությունն այժմ մեկ օրում թողարկում է ավելի շատ արտադրանք, քան նախասովետական Հայաստանը ողջ 1919 թ. ընթացքում։

Ներկայումս միայն մեկ օրում Հայաստանի էլեկտրակայանները 1,4 անգամ ավելի էներգիա են տալիս, քան ողջ 1913 թվականի ընթացքում։ Էլեկտրիֆիկացված են ռեսպուբլիկայի բոլոր քաղաքներն ու շրջանային կենտրոնները։ Սովխոզների, կոլտնտեսությունների, գյուղական բնակավայրերի ճնշող մեծամասնությունը էլեկտրաէներգիա են ստանում ինչպես Ժողտնտխորհի էներգետիկ վարչության ցանցերից, այնպես էլ գյուղական պետական և միջկոլտնտեսային հիդրոէլեկտրակայաններից։ Բնակչության յուրաքանչյուր շնչին ընկնող էլեկտրաէներգիայի արտադրությամբ Հայաստանն այժմ Միության մեջ բռնում է առաջին տեղերից մեկը և զգալիորեն առաջ է անցել զարգացած շատ կապիտալիստական երկրներից, ինչպես, օրինակ՝ Ֆրանսիայից, Իտալիայից, Ճապոնիայից։ Իսկ հարևան երկրների՝ Թուրքիայի և Իրանի համեմատությամբ, յուրաքանչյուր շնչին Հայաստանում տասնյակ անգամներ ավելի էլեկտրաէներգիա է հասնում։

Զարգացած էներգետիկայի և գունավոր մետաղահանքերի ու ոչ հանքային հումքի հսկայական պաշարների բազայի առկայության հիման վրա ռեսպուբլիկայում բուռն կերպով զարգացել են գունավոր մետալուրգիան, քիմիական արդյունաբերությունը, մեքենաշինությունը, շինանյութերի արդյունաբերությունը։

Անցած տարում Հայաստանում թողարկվել են 1,5 անգամ ավել մետաղահատ հաստոցներ, քան 1913 թ. ողջ ցարական Ռուսաստանում։

Այժմ ռեսպուբլիկայում արտադրվում են կաուչուկ, հանքային պարարտանյութեր, պլաստմասսաներ, ավտոդողեր, պղինձ, մոլիբդեն, ցինկի, կապարի կոնցենտրատներ, ալյումին, մետաղահատ հաստոցներ, գեներատորներ, տրանսֆորմատորներ, շարժական էլեկտրակայաններ, կոմպրեսորներ, հիդրոտուրբիններ, կաբելներ, ճշգրիտ էլեկտրասարքավորումներ, ժամացույցներ, ցեմենտ, հրակայուն նյութեր, ասբոշիֆեր և արտադրանքի շատ այլ տեսակներ։

Ծանր արդյունաբերության բազայի վրա ստեղծվեցին թեթև և սննդի արդյունաբերության բազմաթիվ նոր ձեռնարկություններ։ Ստեղծվեց բամբակյա և բրդյա գործվածքեղենի, տրիկոտաժի, պահածոների և ժողովրդական սպառման այլ ապրանքների արդյունաբերությունը։

Թեթև արդյունաբերության ապրանքների թողարկումը 1958 թ. 1913 թ. համեմատությամբ ավելացավ 43 անգամ, իսկ սննդի արդյունաբերության արտադրանքի թողարկումը՝ 20 անգամ։

Հետպատերազմյան 13 տարիների ընթացքում ռեսպուբլիկայում կառուցվել և շահագործման է հանձնվել 200 նոր արդյունաբերական ձեռնարկություն։

Արդյունաբերական զարգացման գործում Հայաստանի ձեռք բերած խոշոր հաջողությունների պերճախոս ապացույց է այն հանգամանքը, որ մոտ անցյալում հետամնաց ագրարային այս երկիրը այժմ ունի բարձր զարգացած արդյունաբերություն, որի արտադրանքի տեսակների մի զգալի քանակությունը լայն կիրառություն է գտնում ոչ միայն Սովետական Միության եղբայրական ռեսպուբլիկաներում, այլև մեր երկրի սահմաններից դուրս։ Այժմ ռեսպուբլիկայի ձեռնարկությունները արտահանության համար թողարկում են արդյունաբերական արտադրանքի ավելի քան 100 տեսակներ։ Մեր ձեռնարկությունների արտադրանքը ուղարկվում է բոլոր սոցիալիստական երկրներին, ինչպես նաև շատ կապիտալիստական երկրների։

Իրագործելով խաղաղասեր արտաքին քաղաքականություն, Սովետական Միությունը ընդլայնում է տնտեսական ու առևտրական կապերը կապիտալիստական, հատկապես տնտեսական տեսակետից թույլ զարգացած երկրների հետ, և այդ նա անում է հավասար հիմունքներով։

Մյուս ռեսպուբլիկաների հետ մեկտեղ, Հայաստանի ժողտնտխորհի գործարանների ու ֆաբրիկաների արտադրանքը ուղարկվում է տնտեսապես թույլ զարգացած երկրները՝ Միացյալ Արաբական ռեսպուբլիկա, Աֆղանստան, Իրան, Պակիստան, Հնդկաստան, Ինդոնեզիա, Բիրմա, Կամբոջա և այլն։

Արմատապես վերափոխվել է հայկական գյուղը։

Կոլտնտեսային կարգը վերացրեց գյուղացիական տնտեսության մանրատվածությունը, մեր գյուղի աղքատությունն ու հետամնացությունը, երջանիկ և բարեկեցիկ կյանք ստեղծեց գյուղացիների համար։

Գյուղատնտեսության վերակառուցման մեջ վճռական դեր կատարեցին մեքենայացումը, էլեկտրիֆիկացումը և լայն իրիգացիոն շինարարությունը։ Սովետական իշխանության տարիներին ռեսպուբլիկայում կառուցվել են տասնյակ խոշոր ջրանցքներ։ Ոռոգվող հողերի տարածությունը աճել է ավելի քան 2 անգամ։

Կոլտնտեսություններն ու սովխոզները առանձնապես մեծ հաջողությունների են հասել վերջին 5 տարում, շնորհիվ գյուղատնտեսության բոլոր ճյուղերի շեշտակի վերելքի մասին Կոմունիստական պարտիայի մշակած լայն ծրագրի իրագործման։

Այդ կարևորագույն միջոցառումների կենսագործումը նոր փուլ նշանավորեց կոլտնտեսային կարգի և մեր ողջ սոցիալիստական սիստեմի զարգացման ու ամրապնդման մեջ։

Այս նոր պայմաններում, ռեսպուբլիկայի կոլտնտեսություններն ու սովխոզները, բացահայտելով և գործադրելով հասարակական տնտեսության հրսկայական հնարավորությունները, 1958 թ. գերակատարեցին բամբակի հումքի, շաքարի ճակնդեղի, մսի, կաթի, բրդի արտադրության և պետությանը վաճառելու պլանները, բանջարեղենի, խաղողի, մրգի ու ծխախոտի հարուստ բերք աճեցրին։

Արտադրության ավելացման, պետությանը գյուղատնտեսական մթերքների վաճառքի պլանների կատարման ու գերակատարման գործում ռեսպուբլիկայի աշխատավորների ձեռք բերած խոշոր հաջողությունների համար Հայկական ՍՍՌ-ն արժանացավ Սովետական Միության բարձրագույն պարգևի՝ Լենինի շքանշանի։

Սոցիալիզմի մյուս նվաճումների կողքին, պատմական մեծ նշանակություն ունի կուլտուրական ռևոլյուցիան ՍՍՌՄ-ում։

Սովետական Հայաստանում, ինչպես և մյուս ռեսպուբլիկաներում, իսկական ծաղկման է հասել հայ ժողովրդի ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական կուլտուրան։ Բնակչության տրամադրության տակ կան կինո-թատրոնների, գրադարանների, կուլտուրայի պալատների, ակումբների, թատրոնների, թանգարանների լայն ցանց, ռադիո և հեռուստատեսային կենտրոններ։ Մեծ հաջողություններ են ձեռք բերվել լուսավորության, առողջապահության, գիտության ու արվեստի զարգացման ասպարեզներում։

Եթե մինչև Սովետական իշխանության հաստատումը Հայաստանի բնակչության ճնշող մեծամասնությունը անգրագետ էր, ապա այժմ Հայաստանը դարձել է համարյա համատարած գրագիտության երկիր։ Տասնյակ միջնակարգ ու բարձրագույն ուսումնական հաստատություններում և ավելի քան 1200 հանրակրթական դպրոցներում կան հարյուր-հազարավոր սովորողներ։ Մասսայական դպրոցներում սովորողների թիվը 1914 թ. համեմատությամբ աճել է 8 անգամ։

Առանձնապես լայն ծավալ է ստացել բարձրագույն կրթությունը։ Սովետական իշխանության տարիներին ռեսպուբլիկայի ԲՈՒՀ-երը տվել են ավելի քան 30 հազար մասնագետ՝ բարձրագույն կրթությամբ։ Ժողովրդական տնտեսության աճող պահանջների կապակցությամբ ԲՈՒՀ-երում ամեն տարի ավելանում է ուսանողների թիվը։ Ներկայումս ռեսպուբլիկայում յուրաքանչյուր 10 հազար բնակչին ընկնում է 3 անգամ ավելի ուսանող, քան Ֆրանսիայում, 8 անգամ ավելի, քան Թուրքիայում և 30 անգամ ավելի, քան Իրանում։

Հայաստանը, որտեղ նախասովետական շրջանում փաստորեն ոչ ոք հոգ չէր տանում ժողովրդի առողջության մասին, այժմ ունի բազմաթիվ բարեկարգ հիվանդանոցների ու առողջարանների լայն ցանց։ Ռեսպուբլիկայում ստեղծված են բժշկական աշխատողների մեծաթիվ բարձրորակ կադրեր։ Ավելի քան 4 հազար բժիշկ և մոտ 9 հազար այլ բուժաշխատողներ իրենց աշխատանքը նվիրում են աշխատավորների առողջության պահպանման ու ամրապրնդման ազնիվ գործին։ Ներկայումս Հայաստանում ունենք ժամանակակից ապարատներով ու նորագույն տեխնիկայով սարքավորված 268 հիվանդանոցային հիմնարկություն, 8 գիտա-հետազոտական ինստիտուտ և լաբորատորիաներ, որոնք խոշոր գիտա-հետազոտական և բժշկական աշխատանք են տանում։

Հաջողությամբ է պսակվել մալարիայի վերացման ուղղությամբ տարվող հսկայական աշխատանքը։ Սիստեմատիկորեն պրոֆիլակտիկ միջոցառումներ են իրագործվում մասսայական վարակիչ հիվանդությունները և համաճարակները կանխելու ուղղությամբ։

Մշտական հոգատարություն է ցուցաբերվում մայրերի ու երեխաների առողջության պահպանման գործում։ Այս պատվավոր աշխատանքը կատարում է կանանց և մանկական կոնսուլտացիաների, մանկամսուրների ու մանկապարտեզների լայն ցանցը։ Ռեսպուբլիկայում գործում են 11 մանկական սանատորիաներ և մոր ու մանկան հանգստի տուն։

Բոլոր աշխատավորների սրտերը լի են օրինական հպարտությամբ մեր Սովետական իշխանության և հարազատ Կոմունիստական պարտիայի նկատմամբ, խորին շնորհակալությամբ՝ ժողովրդի առողջության և բարգավաճման գործում ցուցաբերած նրանց մեծ հոգատարության համար։

Հայտնի է, որ նախասովետական Հայաստանում, ինչպես և ամբողջ ցարական Ռուսաստանում ժողովրդական առողջապահությունը խղճալի վիճակ էր քարշ տալիս։ 1913 թ. Հայաստանում կար ընդամենը 6 հիվանդանոց 212 մահճակալով և միայն 73 բժիշկ։ Նախահեղափոխական Հայաստանում պետական բյուջեից առողջապահության գծով բնակչության յուրաքանչյուր շնչին ընկնում էր 28 կոպեկ։ Հայաստանի այն ժամանակվա չորս քաղաքներում քաղաքային բյուջեների ծախսը սանիտարական-էպիդեմիական միջոցառումների վրա, մալարիայի և այլ ինֆեկցիոն ու համաճարակային հիվանդությունների մասսայական տարածվածության պայմաններում, կազմում էր ընդամենը 2,3 հազ. ռուբլի։ Պարզ է, որ առողջապահության այսպիսի պայմաններում, բնակչության և հատկապես երեխաների մահացությունը շատ բարձր էր։ Այժմ ամերիկյան իմպերիալիզմին ենթակա երկրներում հսկայական գումարներ են ծախսվում սպառազինությունների մրցավազքի վրա, իսկ առողջապահության կարիքներին հատկացվում են չնչին միջոցներ։ Ծանր ճգնաժամ է ապրում առողջապահությունը Հայաստանի հարևան կապիտալիստական Թուրքիայում։ Հիվանդանոցների և նրանցում եղած մահճակալների փոքր քանակությունը, բուժաշխատողների անբավարար լինելը, շատ դեղերի բացակայությունը, բուժման դիմաց տրվող արդեն իսկ բարձր վարձի անընդհատ աճը,— սրանք են առողջապահության վիճակի բնորոշ գծերը Թուրքիայում։ 1955 թ. վիճակագրության տվյալներով Թուրքիայում յուրաքանչյուր 10.000 մարդուն ընկնում էր ընդամենը 2,7 բժիշկ (չհաշված ատամնաբույժներին). մեկ ատամնաբույժ է ընկնում 25 հազ. մարդուն։ Հայաստանում 10.000 հոգուն սպասարկում է 22 բժիշկ։ Հատկապես զգալի է Թուրքիայում միջին բուժանձնակազմի պակասը։ Բոլոր բժշկական հիմնարկություններում կա ընդամենը 1669 բուժքույր։ 1956 թ. Թուրքիայում յուրաքանչյուր 10.000 բնակչին ընկնում էր 10,2 հիվանդանոցային մահճակալ, այսինքն՝ 6 անգամ պակաս, քան մեր ռեսպուբլիկայում։

Թուրքիայի բժշկական հիմնարկություններն ու ուսումնական հաստատությունները ժամանակակից սարքավորման և գործիքների խիստ կարիք ունեն։

Թուրքիայի աշխատավորների ծանր կենսապայմանները, առաջին անհրաժեշտության ապրանքների գների աճը, կեղտը և հակասանիտարական վիճակը նպաստում են մասսայական վարակիչ հիվանդությունների տարածմանը։ Թուրքիայի բնակչության համար մահացու խարազան է տուբերկուլյոզը, որից ամեն տարի մեռնում է ավելի քան 60 հազար մարդ։

Տնտեսության և կուլտուրայի բուռն աճը ապահովեց մեր ժողովրդի նյութական բարեկեցության զգալի բարելավումը։ Աշխատավորների եկամուտների բարձրացումը, նրանց բնակարանային և կուլտուր-կենցաղային պայմանների բարելավումը, ժողովրդական առողջապահության վերելքը պայմանավորեցին ռեսպուբլիկայի բնակչության արագ աճը։

Սոցիալիստական հասարակարգում, կենսամակարդակի բարձրացման հիման վրա տեղի է ունենում ազգաբնակչության մշտական և արագ աճ, նրվազում են մահացությունն ու հիվանդությունները։

Այդ օրենքի ներգործությունը բնորոշ կերպով արտահայտվում է մեր երկրում։ 1914 թ. ներկայիս Հայկական ՍՍՌ-ի սահմաններում բնակվում էր մեկ միլիոնից մի փոքր ավելի մարդ։ Իմպերիալիստական պատերազմը և դաշնակների տիրապետության տարիներին սովի ու համաճարակային հիվանդությունն-

ների հետևանքով տեղի ունեցած հսկայական մահացությունը զգալիորեն կրճատեցին ազգաբնակչության թիվը, չնայած այն բանին, որ հարյուր հազարավոր արևմտահայ գաղթականներ փախչելով թուրքական կոտորածներից տեղավորվեցին մեր երկրում։ Միայն դաշնակների տիրապետության տարիներին Հայաստանում զոհվեց ավելի քան կես միլիոն մարդ։

Սովետական կարգեր հաստատվելու պահին Հայաստանի բնակչության թիվը կազմում էր 780 հազ. մարդ, բայց 1926 թ. համամիութենական մարդահամարի ժամանակ արդեն Հայաստանում հաշվվում էր 880,5 հազ. բնակիչ։ Կարճ ժամանակամիջոցում ազգաբնակչությունն ավելացել էր 12,5%-ով։

1959 թ. համամիութենական մարդահամարի տվյալներով Հայկական ՍՍՌ-ի ազգաբնակչությունը կազմում է 1,768 հազ. մարդ։ Սովետական իշխանության տարիներին ռեսպուբլիկայի ազգաբնակչությունն աճել է ավելի քան 2 անգամ։

Բնակչության այս ավելացումը հիմնականում տեղի է ունեցել բնական աճի հետևանքով։ Ըստ որում, բնական աճի գործակիցը տարեց-տարի ավելանում է, ի հաշիվ մահացության նվազեցման և ծննդի ավելացման։ Այսպես, եթե 1940 թ. յուրաքանչյուր 1000 հոգուն ընկնող բնական աճը կազմում էր 27,4 մարդ, ապա 1956 թ. այն կազմում էր 30,4 մարդ, ի հաշիվ մահացության իջեցման։ Ազգաբնակչության բնական աճը Հայաստանում գերազանցում է ուրիշ շատ երկրների աճից։

Հայկական ՍՍՌ-ի ազգաբնակչությունը աճում է նաև ի հաշիվ արտասահմանից հայրենիք վերադարձած հայերի։

Զգալի թվով հայերի առկայությունը տարբեր երկրներում պայմանավորված է մի շարք պատմական իրադարձություններով։ Ինքնուրույն պետականությունը կորցնելով, դարեր շարունակ Հայաստանը ենթարկվել է ավերիչ արշավանքների, դարձել անհամար կռիվների ռազմաբեմ, որի հետևանքով տեղական բնակչությունը բնաջնջվում էր, բազմաթիվ սերունդների ջանքերով ստեղծված քաղաքներն ու գյուղերը վեր էին ածվում փլատակների։ Հայրենիքում ստեղծված անտանելի կենսապայմանները առաջ բերեցին մասսայական արտագաղթ դեպի այլ երկրներ։

Հայերի խոշոր արտագաղթ Արևմտյան Հայաստանից տեղի է ունեցել նաև XIX դ. վերջին և XX դ. սկզբին, երբ սուլթանական կառավարությունը իրագործում էր «հայկական հարցը» հայերի ոչնչացման ճանապարհով լուծելու հրեշավոր ծրագիրը։ Հայկական վիլայեթները ամայացվում էին մասսայական կոտորածների հետևանքով, և միլիոնից ավել փրկված հայեր ցրվեցին աշխարհով մեկ։

Հայ ժողովուրդը, որ իր բազմադարյան պատմության ընթացքում կրել է մեծ փորձություններ, տանջանք, վիշտ ու զրկանք և հասել ֆիզիկական բընաջնջման եզրին, միայն Սովետական իշխանության հաստատումից հետո ձեռք բերեց իր երջանկությունը, իր անկախ հայրենիքը։ Մոխրից վերածնված Սովետական Հայաստանը դարձավ արտասահմանյան բազմաթիվ երկրներում ապրող աշխատավոր հայերին ձգող կենտրոնը։

Ընդառաջելով հայրենազուրկ հայերի ցանկություններին, Կոմունիստական պարտիան և Սովետական կառավարությունը դեռևս 1924 թվականից սկսեցին անհրաժեշտ պայմաններ ստեղծել արտասահմանյան երկրներից հայերի հայրենադարձության համար։

1924, 1926, 1932 և 1936 թվականներին Հունաստանից, Ֆրանսիայից և այլ երկրներից Հայաստան փոխադրվեցին 75 հազ. հայեր։ Հայրենական պատերազմից հետո, 1946 թ. մինչև 1948 թ. Սիրիայից, Եգիպտոսից, Իրանից, ԱՄՆ-ից և այլ երկրներից Հայաստան վերադարձավ մոտ 100 հազ. մարդ։ 1953—1958 թթ. ընթացքում տարբեր երկրներից Հայաստան եկավ մոտ 4 հազ. մարդ։

Հայրենադարձներին բնակարանով ապահովելու համար Երևանի, Լենինականի, Կիրովականի, Հոկտեմբերյանի և ուրիշ քաղաքների շուրջը կառուցվեցին ամբողջ ավաններ պետական վարկի օգնությամբ, արտոնյալ պայմաններով, Սովետական Հայաստանի նոր քաղաքացիները գյուղերում ու ավաններում կառուցեցին շուրջ 800 հազ. քառակուսի մետր բնակելի տարածություն և ավելի քան 40 հազար տուն գյուղական վայրերում։

Հայաստանի կառավարությունը և ողջ ժողովուրդը ջերմորեն ընդունեցին իրենց բույրերին ու եղբայրներին։ Մեծ հոգատարություն ցուցաբերվեց նրանց ըստ մասնագիտության աշխատանքով բավարարելու, տարիքավորներին կենսաթոշակով ապահովելու, երեխաներին մասսայական դպրոցներում ուսման մեջ ներգրավելու ուղղությամբ։

Հայրենիք վերադարձած հայերը սովորելու, իրենց ընտրությամբ մասնագիտություն ստանալու և իրենց ընդունակությունները լիովին բացահայտելու լայն հնարավորություններ ստացան։ Սովետական մարդկանց հետ մեկտեղ տասնյակ հազարավոր հայրենադարձներ սովորում են տարբեր դպրոցներում ու բարձրագույն ուսումնական հաստատություններում։ Մարդիկ իսկապես վերածնվեցին հարազատ հողում։

Կրթություն և մասնագիտություն ստանալով, նրանք Սովետական պետության մյուս քաղաքացիների հետ մեկտեղ, ոգևորությամբ աշխատում են ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերում՝ իրենց մասնագիտությանը և ունակություններին համապատասխան, ի բարօրություն մեր Հայրենիքի։ Շատ հայրենադարձ նորարարների ու արտադրության առաջավորների, գիտության, կուլտուրայի ու արվեստի գործիչների անունները լայնորեն հայտնի են Հայաստանի սահմաններից դուրս։ Ռեսպուբլիկայի Գերագույն Սովետի, աշխատավորների դեպուտատների քաղաքային, շրջանային և գյուղական սովետների գործունեությանն ակտիվորեն մասնակցում են հայրենադարձներից ընտրված դեպուտատներ։

Իր հիանալի ձայնով և բարձր կատարողական արվեստով աշխարհով մեկ հռչակվել է Սովետական Միության ժողովրդական արտիստուհի, Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի դեպուտատ Գոհար Գասպարյանը։ Մեր երկրում մեծ սեր և ժողովրդականություն է վայելում Հայրենիք վերադարձած Արթուր Այդինյանը։ Հայրենիքը նրան ոչ միայն երգչի փառք տվեց, այլև վերադարձրեց օտարության մեջ կորցրած տեսողությունը։ Ունկնդիրների սերն են նվաճել Երևանի Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնի մենակատար, ռեսպուբլիկայի վաստակավոր արտիստ Միհրան Նրկաթը, մենակատար Արմինե Թութունջյանը, ռեսպուբլիկայի վաստակավոր արտիստներ Լևոն Գեոխլանյանը, Հովհաննես Բաղալյանը, ջութակահարների միջազգային մրցանակաբաշխության լաուրեատ Ժան Տեր-Մերկերյանը, Երիտասարդության 6-րդ համաշխարհային ֆեստիվալի լաուրեատ,՝ Հայաստանի

պետական երգչախմբի ղեկավար, ռեսպուբլիկայի վաստակավոր արտիստ Եուրար Սնգրյանը։

Հայ կերպարվեստը հարստացել է հայրենադարձներ, ռեսպուբլիկայի արվեստի վաստակավոր գործիչներ Ռաֆայել Սիշմանյանի (1885—1959), Գրիգոր Ահարոնյանի, Հարություն Գալենցի, Արմինե Պարոնյանի տաղանդավոր ստեղծագործություններով։

Հայրենիք վերադարձած հայերի ուրախ ու երջանիկ կյանքին, հայ ժողովրդի ազատ, ստեղծարար աշխատանքի մասին գրական երկեր ստեղծելու վրա են աշխատում հայրենադարձ գրողներ Ս. Ալաջաջյանը, Ա. Ավագյանը, Հովհ. Ղուկասյանը, Ա. Թերզյանը, Պ. Զեյթունցյանը և ուրիշներ։

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի բիոքիմիայի գիտա-հետազոտական լաբորատորիան ղեկավարում է հայրենադարձ, Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս, պրոֆեսոր Մկրտիչ Տեր-Կարապետյանը։ Բազմաթիվ հայրենադարձներ հայրենիքում դարձան գիտության թեկնածուներ։ Դրանց թվում են՝ քիմիական գիտությունների թեկնածու Տրդատ Ֆրմոյանը, տնտեսագիտական գիտությունների թեկնածու Հակոբ Թրյանը, պատմական գիտությունների թեկնածու Վարդան Թեմուրճյանը և ուրիշներ։

Բազդադից հայրենիք վերադառնալով, երիտասարդ ինժեներ Հարություն Սահակյանն աշխատանքի անցավ Երևանի էլեկտրաճշգրիտ չափիչ գործիքների գործարանում և այժմ գործարանի գլխավոր կոնստրուկտորն է։

Երիտասարդ ճարտարապետ Ստեփան Ակշեյրյանի նախագծերով Երևանում և ռեսպուբլիկայի մյուս քաղաքներում կառուցվել են բազմաթիվ գեղեցիկ բնակելի շենքեր։

Զգալի թվով հայրենադարձներ, որոնք արտասահմանում զբաղվում էին հողագործությամբ, իրենց նոր կյանքն սկսեցին Սովետական Հայաստանի կոլտնտեսություններում։ Հայրենադարձ կոլտնտեսականները պետությունից ստացան տներ և տնամերձ հողամասեր։ Շատ հայրենադարձներ հռչակվեցին գյուղատնտեսության ասպարեզում ունեցած իրենց խոշոր հաջողություններով։ Խաղողի բարձր բերք ստանալու համար աշխատանքի հերոսներ Ա. Առաքելյանն ու Գ. Թամազյանն արժանացել են Սոցիալիստական Աշխատանքի Հերոսի բարձր կոչման։ Այդ բարձրագույն պարգևին է արժանացել նաև Սիրիայից եկած Ալնիվ Խորյանը, որը բարձր ցուցանիշների է հասել մետաքսի բոժոժի արտադրության գործում։

Սոցիալիստական հասարակարգի արտադրողական ուժերի աճը պահանջում է հասարակական աշխատանքի պլանավորված կազմակերպում. նրա բնորոշ առանձնահատկություններից մեկը ողջ աշխատունակ բնակչության լրիվ և ռացիոնալ օգտագործումն է։

Ռեսպուբլիկայի ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի արագ զարգացման հետևանքով զգալիորեն աճեց բանվորների ու ծառայողների թիվը։ Առաջին հնգամյակի սկզբում արդեն գործազրկությունը լիովին վերացված էր։ Ժողովրդական տնտեսության մեջ զբաղված բանվորների ու ծառայողների թիվը 1928 թ. հասավ 42,5 հազ. մարդու։ Սոցիալիստական շինարարության հնգամյա պլանների հաջող իրագործումն ապահովեց բանվորների ու ծառայողների թվի հետագա աճը։ Նրանց թիվը, 1958 թ. 1928 թ. համեմատությամբ

ավելացել էր համարյա 9 անգամ։ Հատկապես մեծ է եղել աշխատավորների առաջատար ջոկատի՝ սոցիալիստական արդյունաբերության մեջ աշխատողների թվի աճը. արդյունաբերական-արտադրական անձնակազմի քանակը նշված ժամկետում ավելացել է 12 անգամ։

Տնտեսության, նախ և առաջ արդյունաբերության և կուլտուրայի աճը զգալի փոփոխություններ առաջ բերեց ռեսպուբլիկայի քաղաքային և գյուղական ազգաբնակչության թվի մեջ։ Եթե նախասովետական Հայաստանում կար միայն 4 ոչ մեծ քաղաք, որոնց բնակչության մեծ մասը կապված էր գյուղատնտեսության հետ, ապա ներկայումս կա 13 քաղաք և 22 քաղաքատիպ ավան։

1913 թ. քաղաքային բնակչությունը կազմում էր 104 հազ. մարդ, կամ ողջ բնակչության 10,4 %-ը։

1959 թ. սկզբին քաղաքներում և քաղաքատիպ ավաններում ապրում էր 883,8 հազ. մարդ, այսինքն ռեսպուբլիկայի բնակչության համարյա 50%-ը։ Այդ նշանակում է, որ 1913 թ. համեմատությամբ քաղաքային բնակչության քանակը ավելացել էր 8, 5 անգամ։

Անճանաչելիորեն փոխվել է քաղաքների դեմքը։ Միության հնագույն քաղաքներից մեկը՝ Երևանը, տիպիկ ասիական քաղաք էր, նեղ ու ծուռ փողոցներով, ցածրիկ կավաշեն շինություններով, տափակ կտուրներով տներով, կեղտոտ շուկաներով։ Այժմ Երևանը, որ մեր ռեսպուբլիկայի մայրաքաղաքն է, դարձել է Սովետական Միության արդյունաբերական ու կուլտուրական կենտրոններից ու գեղեցիկ քաղաքներից մեկը։

Պրոլետարական մեծ գրող Մ. Գորկին, որ 1928 թ. այցելել է Երևան, գրել է. «Առաջին բանը, որ աչքի է զարնում Երևանին մոտենալիս՝ շինարարությունն է։ Հին քարաշեն քաղաք արծաթագույն Արարատի մոայլ զանգված ֆոնի վրա, կարմրավուն ամպերի գլխարկի տակ, այդ քաղաքը ինձ վրա շինարարական փայտամածների վանդակի մեջ բանտարկվածի տպավորություն թողեց, որոնց վրա բանվորների մրջյունանման ֆիգուրները նոր շենքեր են քանդակում անմիջականորեն բիբլիական լեռան քարե զանգվածից...»։

Այս վառ խոսքերը վերակառուցվող Երևանի մասին ասվել է 30 տարի առաջ։ Ի՞նչ կասեր արդյոք մեծագույն հումանիստը և ստեղծագործողը, եթե տեսներ այսօրվա Երևանը։ Այն ժամանակից ի վեր Սովետական Հայաստանի մայրաքաղաքում տեղի են ունեցել ուղղակի հեքիաթային վերափոխումներ։ Հին փոքրիկ քաղաքի խղճուկ, տխուր տեսարանը փոխարինվել է բուռն կերպով աճող նոր սոցիալիստական քաղաքի պայծառ, կենսուրախ պատկերով։

Քաղաքի բոլոր գլխավոր փողոցներն ու հրապարակները ասֆալտապատված են, լայն պողոտաների ու փողոցների երկու կողմերից ձգվում են բազմահարկ տներ՝ գեղեցիկ տուֆերից ու ֆիլգիտներից, կանաչ տարածությունները խիտ օղակով շրջապատում են քաղաքը։ Ստեղծվել են նոր լայն մայրուղիներ ու պողոտաներ, այգիներ, պուրակներ, շատրվաններ, հոյակապ ճարտարապետական անսամբլներ։ Երբ 1924 թ. ճարտարապետության ակադեմիկոս Ալեքսանդր Թամանյանը մշակեց Երևանի վերակառուցման ու զարգացման առաջին գլխավոր պլանը, քաղաքում կար մոտ 30 հազ. բնակիչ։

Չնայած նոր Երևանի մասին ժամկետների տեսակետից եղած ամենահամարձակ ու լայն ծրագրերին, քաղաքային շինարարության հետագա թափը շատ ու շատ գերազանցեց գլխավոր պլանի բոլոր նախադրյալները։ Քաղաքի զար-

գացումն ու աճը առաջ էր անցնում նախագծային բոլոր ենթադրություններից։ Այժմ Երևանն ունի 500 հազարից ավելի բնակիչ։

Հայկական ՍՍՌ-ի, իր նշանակությամբ ու մեծությամբ երկրորդ քաղաքը՝ Լենինականը, մոտ անցյալում Գյումրին ոչ մեծ գյուղ էր, որը հետագայում վերածվեց Ալեքսանդրապոլ բերդի ու ոչ մեծ գավառական քաղաքի։ Սովետական իշխանության տարիներին այն դարձավ խոշոր արդյունաբերական կենտրոն։

Գլխավոր նախագծի համաձայն կատարվող վերակառուցումը արմատապես փոխել է Լենինականի տեսքը և դարձրել այն իսկական սոցիալիստական քաղաք։ Կառուցվում են նոր մայրուղիներ, հրապարակներ։ Բնակելի և կուլտուր-կենցաղային շենքերով այժմ ձևավորված է քաղաքի համարյա ողջ կենտրոնական մասը և ամբողջ արդյունաբերական շրջանը։ Նախկինում համարյա լրիվ կանաչազուրկ Լենինականը արագ տեմպերով կանաչապատվում է։ Ներկայումս պուրակներ են ստեղծված և կանաչապատված են շատ փողոցներ, մայրուղիներ ու քաղաքի ամբողջ շրջաններ։ Արմատական վերափոխման է ենթարկվել քաղաքային այգին, որը դարձել է ռեսպուբլիկայի ամենալավ և գեղեցիկ այգիներից մեկը։

Ոչ մեծ ամառանոցային ավան Ղարաքիլիսայից աճել է բարեկարգ քաղաք Կիրովականը՝ խոշոր արդյունաբերությամբ։ Ստեղծված են նոր բնակելի շրջաններ։ Քաղաքը լի է քարե գեղեցիկ հասարակական, կուլտուր-կենցաղային և բնակելի շենքերով։

Սրանց կողքին ստեղծվել են շատ նոր քաղաքներ ու բանվորական ավաններ՝ հանքային հումքի արդյունահանման և մշակման, խոշոր հիդրոկայանների շինարարության և գյուղատնտեսական հումքի վերամշակման վայրերում։

Մեր ռեսպուբլիկայի, ինչպես և ամբողջ երկրի տնտեսությունն ու կուլտուրան առանձնապես բուռն զարգացում են ապրում վերջին տարիներին։

Ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի ու կուլտուրայի այս նոր, աննախընթաց վերելքին նախ և առաջ նպաստում են տնտեսության ղեկավարման մեջ ռեսպուբլիկաների և տեղական կազմակերպությունների իրավունքների ընդլայնման, արդյունաբերության և շինարարության ղեկավարման վերակառուցման, ՄՏ կայանների վերակազմավորման և կոլտնտեսային կարգի հետագա զարգացման ուղղությամբ ՍՄԿՊ Կենտրոնական Կոմիտեի նախաձեռնությամբ իրականացված մի շարք միջոցառումները։

* * *

Կոմունիստական մեծ պարտիայի ղեկավարությամբ սովետական ժողովրդի ձեռք բերած հսկայական հաջողությունները անհրաժեշտ նախապայմաններ ստեղծեցին երկրի տնտեսության և կուլտուրայի հետագա վերելքի, աշխատավորների նյութական բարեկեցության բարձրացման համար։

1959—1965 թթ. ժողովրդական տնտեսության զարգացման ՍՄԿՊ XXI համագումարի հաստատած պլանը միութենական բոլոր ռեսպուբլիկաների առաջ հետագա զարգացման նոր լուսավոր հեռանկարներ է բացում։

Հաստատելով մեր երկրում կոմունիստական հասարակարգի կառուցման ծավալուն ծրագիրը, ՍՄԿՊ XXI համագումարը միաժամանակ որոշեց յուրաքանչյուր ռեսպուբլիկայի և տնտեսական շրջանի առաջ կանգնած խնդիրները։

Յոթնամյա պլանում նախատեսվում է մի կողմից յուրաքանչյուր ռեսպուբլիկայի ռեսուրսների առավել արդյունավետ օգտագործումը և, մյուս կողմից, ապահովվում է առանձին ռեսպուբլիկաների ու ամբողջ երկրի շահերի ճիշտ զուգորդումը։

Նկատի ունենալով երկրի տերիտորիայում արտադրողական ուժերի ճիշտ տեղաբաշխման անհրաժեշտությունը, յուրաքանչյուր ռեսպուբլիկայում առաջին հերթին զարգացնում են տնտեսության այն ճյուղերը, որոնց համար այստեղ կան ամենից ավելի նպաստավոր բնական և տնտեսական պայմաններ։

Սրանից ելնելով, աշխատանքի ընդհանուր միութենական բաժանման մեջ, տեղական հումքային ու աշխատանքային ռեսուրսներին և արդեն ձևավորված առանձնահատկություններին համապատասխան, Հայկական ՍՍՌ-ի արդյունաբերությունը մասնագիտանում է գունավոր մետաղների, սինթետիկ քիմիական նյութերի և քիչ մետաղ պահանջող ճշգրիտ մեքենաշինության ու սարքաշինության արտադրության զարգացման մեջ։

Յոթնամյա պլանի առանձնահատկությունը արդյունաբերության զարգացման մեծ թափն է։

1965 թ. Հայաստանի արդյունաբերությունը 2,3 անգամ ավել արտադրանք կթողարկի, քան 1958 թ., ըստ որում տարեկան միջին աճը կկազմի 12,3%, նախորդ յոթ տարվա տարեկան միջին աճի 11%-ի դիմաց։

Կարևոր է նշել, որ առաջիկա յոթնամյակում, համախառն արտադրանքի աճի յուրաքանչյուր տոկոսի բացարձակ մեծությունը ավելի քան երկու անգամ գերազանցելու է 1952—1958 թթ. աճի յուրաքանչյուր տոկոսին ընկնող արտադրանքի քանակը։

1965 թ. ռեսպուբլիկան կտա 5,7 անգամ ավելի արտադրանք, քան 1950 թ. և 14 անգամ ավել քան 1940 թ.։

Ընդլայնված սոցիալիստական վերարտադրության նման բարձր տեմպերի հիմքը նոր շինարարության և գործող ձեռնարկությունների վերակառուցման մեջ մուծված կապիտալ ներդրումներն են։ 1959—65 թթ. պետական կապիտալ ներդրումները մեր ռեսպուբլիկայում կազմում են 12,7 միլիարդ ռուբլի, որը 2,4 անգամ ավել է 1952—1958 թթ. ներդրումներից։ Կապիտալ ներդրումների այս ծավալի վիթխարիության մասին է վկայում այն փաստը, որ առաջիկա 7 տարում ռեսպուբլիկայի ժողովրդական տնտեսության մեջ կներդրվի մեկ միլիարդ ռուբլով ավելի, քան ներդրվել է Սովետական Հայաստանի գոյության 38 տարիների ընթացքում։

Յոթնամյակի տարիներին ռեսպուբլիկայում կկառուցվի 150 նոր ձեռնարկություն, այդ թվում մի շարք հզոր գործարաններ ու կոմբինատներ։

Արդյունաբերության բոլոր ճյուղերի մեջ ամենից շատ կապիտալ ներդրումներ, ավելի քան 1,4 միլիարդ ռուբլի, կստանա գունավոր մետալուրգիան։ Այդ բնագավառում մեզ մոտ առաջատար նշանակություն ունեն պղնձի և պղնձա-մոլիբդենային ձեռնարկությունները։

Յոթնամյակի խոշոր նորակառույցներից կլինի նեֆելինային սիենիտների (որոնց պաշարները գործնականորեն անսպառ են) վերամշակման Հրազդանի լեռնաքիմիական կոմբինատը։ Նշված կոմբինատի կառուցումը կարևոր ժողովրդա-տնտեսական նշանակություն ունի, քանի որ նրա բազմազան արտադրանքը լայն կիրառում կգտնի երկրի արդյունաբերության տարբեր ճյուղերում

և գյուղատնտեսության մեջ։ Նեֆելինային սիենիտներից կավահող ստանալը թույլ կտա մեծացնել ալյումինի արտադրությունը և դադարեցնել կավահողի թանկ նստող տեղափոխումները ուրալից։ Բացի դրանից այդ լեռնատեսակի վերամշակման ժամանակ կարտադրվեն մի շարք արժեքավոր նյութեր, ինչպես՝ բարձրորակ ցեմենտ, պոտաշ, նատրիումի և կալցիումի մետասիլիկատներ, երևանիտ, մաքուր սիլիկահող, սպիտակ մուր և այլն։

Լեռնա-քիմիական կոմբինատի արտադրանքը լայն կիրառում կգտնի ժողովրդական տնտեսության շատ ճյուղերում և կփոխարինի մի շարք խիստ հազվագյուտ և թանկարժեք նյութերի։

Այսպես, նատրիումի մետասիլիկատը, որ նոր արտադրանք է մեր երկրում, կկիրառվի լվացող նյութերի նոր ստեղծվող արդյունաբերության մեջ, ինչպես նաև արդյունավետ կերպով կփոխարինի կալցիացված և կաուստիկ սոդային շատ բնագավառներում։

Կալցիումի մետասիլիկատը օգտագործվում է ռետինատեխնիկական, էլեկտրատեխնիկական և լաքի-ներկի արդյունաբերության մեջ որպես բարիտի փոխարինող, այն կօգտագործվի նաև աղուտահողերի աղազերծման համար, խոնավություն կլանող հանքային պարարտանյութերի արտադրության մեջ և այլն։

Երևանիտը ևս նոր նյութ է, ներկայացնում է սոդայի և սիլիկահողի հոմոգեն խառնուրդ։ Երևանիտը ունիվերսալ հումք է տեսակավոր և օպտիկական ապակիներ, բյուրեղապակի, ինչպես նաև թերթավոր ապակի և հայելապակի ստանալու համար։

Քիմիապես մաքուր սիլիկահողը իր որակով չի զիջում լեռնային բյուրեղին, իսկ արժողությամբ մի քանի տասնյակ անգամ էժան է։ Այս արժեքավոր նյութը լայն կիրառում կգտնի կիսահաղորդիչային սարքերի, լյումինաֆորների արտադրության, օպտիկական արդյունաբերության մեջ և այլն։

Մի շարք նոր գործարանների ու կոմբինատների շինարարության հետ մեկտեղ առաջիկա յոթնամյակում գունավոր մետալուրգիայի զարգացումը հիմնականում պետք է ընթանա գործող ձեռնարկությունների ընդլայնման և վերակառուցման ուղիով։ Պղնձահանքի, պղնձա-մոլիբդենային և պոլիմետաղային հանքանյութի հանույթն ու վերամշակումը 1965 թ. 1958 թ. համեմատությամբ կավելանա համարյա 4 անգամ։

Հաշվի առնելով քիմիական արդյունաբերության հսկայական նշանակությունը ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի հետագա տեխնիկական առաջընթացի գործում, ՍՄԿՊ ԿԿ Մայիսյան պլենումը (1958 թ.) մշակեց ծանր արդյունաբերության այդ կարևորագույն բնագավառի արագ զարգացման լայն ծրագիր։ Այդ պլենումի որոշումների հիման վրա ռեսպուբլիկայում միջոցառումներ են մշակվել սինթետիկ քիմիական նյութերի և պլաստմասսաների արտադրությունը զգալիորեն ավելացնելու ուղղությամբ։

Քիմիական արդյունաբերության մեջ կապիտալ ներդրումները 1952—1958 թթ. համեմատությամբ կավելանա 6 անգամ։

Եթե վերջին տարիներին քիմիական արդյունաբերության զարգացումը ռեսպուբլիկայում փոքր ինչ կասեցվում էր էներգառեսուրսների սահմանափակության հետևանքով, ապա առաջիկայում նրա զարգացումը հիմնվելու է եղ-

բայրական Ադրբեջանից ստացվող բնական գազի օգտագործման վրա, որը ամենաէժան հումքն է պոլիմերների արտադրության մեջ օրգանական սինթեզի համար և էլեկտրաէներգիայի ավելի քիչ ծախս է պահանջում։ Բնական գազից ացետիլեն ստանալը զգալիորեն կիջեցնի նրանից մշակվող սինթետիկ կաուչուկի, վինիլացետատի, քացախաթթվի, պոլիքլորվինիլային խեժերի և այլ քիմիական նյութերի ինքնարժեքը։

Քիմիական և թեթև արդյունաբերության հետագա զարգացման համար մեծ նշանակություն կունենա կորդի, իսկ հետագայում՝ մետաքսի արտադրության Հրազդանում կառուցվող կապրոնե թելի կոմբինատը։ Ավտոմոբիլային դողերի արտադրության մեջ կապրոնե կորդը կփոխարինի բամբակի կորդին։ Նրա օգտագործումը զգալիորեն կլավացնի դողերի որակը, նրանց օգտագործման ժամկետը 30—40%-ով կավելանա, իսկ արտադրանքի միավորին ընկնող կաուչուկի ծախսումը կկրճատվի 20%-ով։ 1961 թ. ժողովրդական տնտեսության համար կարևոր արտադրանք կտա ացետատային մետաքսի Կիրովականում կառուցվող գործարանը։ Ներկայումս տեքստիլ և տրիկոտաժի ձեռնարկությունները արհեստական մետաքսի մեծ կարիք են զգում։ Ռեսպուբլիկայում ացետատային մետաքսի արտադրության կազմակերպումը կայուն հումքային բազա կստեղծի թեթև արդյունաբերության հետագա զարգացման համար և թույլ կտա զգալիորեն բարելավել թողարկվող մետաքսի գործվածքեղենի որակը։

Արհեստական և սինթետիկ թելեր, խեժերի և պլաստմասսաների արտադրության աճը բազա կստեղծի գործվածքեղենի, կոշկեղենի և տնային օգտագործման առարկաների արտադրության ծավալը խիստ մեծացնելու, բնակչության աճող պահանջները բավարարելու համար, ինչպես նաև արդյունաբերության բոլոր ճյուղերում մետաղների, հատկապես գունավոր մետաղների փոխարինողների արտադրության համար։

Առաջիկա յոթնամյակում, արդյունաբերության բոլոր ճյուղերից, ամենաարագ տեմպերով զարգանալու է մեքենաշինությունը, որը, ինչպես հայտնի է, արդյունաբերության սիրտն է, ողջ ժողովրդական տնտեսության տեխնիկական առաջընթացի հիմքը։ Մեքենաշինությունը Հայաստանում առաջիկայում ևս պետք է զարգանա բարձր մակարդակի ճշգրտության սարքերի արտադրության գծով, որոնք համեմատաբար շատ աշխատատար են և քիչ մետաղ են պահանջում։ Մետաղաշինության մեջ առաջատար տեղ է գրավում էլեկտրատեխնիկական արդյունաբերությունը, որի զարգացումը հիմնված է ռեսպուբլիկայում գունավոր մետաղների, սինթետիկ քիմիական արտադրանքի, մեկուսիչ և այլ նյութերի արտադրության առկայության վրա։ Հետպատերազմյան տարիներին ռեսպուբլիկայում ստեղծվել են այնպիսի խոշոր ձեռնարկություններ, ինչպես՝ Վ. Ի. Լենինի անվան էլեկտրամեքենաշինական գործարանը, կաբելի, էլեկտրալամպերի և այլ գործարանները, որոնց արտադրանքը ուղարկվում է Սովետական Միության շատ տնտեսական շրջաններ, ինչպես նաև արտասահմանյան երկրներ։ Վ. Ի. Լենինի անվան էլեկտրամեքենաշինական գործարանը ոչ միայն ռեսպուբլիկայի, այլև Սովետական Միության խոշորագույն գործարաններից է։ Նրա մեծ, լավ սարքավորված ցեխերում բազմահազարանոց կոլեկտիվ է աշխատում։ Ներկայումս գործարանը թողարկում է սինքրոնային գեներատորներ, ուժային տրանսֆորմատորներ, շարժական էլեկտրակայաններ, տրանսֆորմատորային ենթակայաններ և այլ արտադրանք։ Արտադրանքի մի քանի կարևո-

յագույն տեսակների թողարկմամբ գործարանն այժմ արդեն երկրում առաջատար տեղ է գրավում։ Յոթնամյակի տարիներին գործարանի համախառն արտադրանքի ծավալը կավելանա ավելի քան երկու անգամ։ Այս աճը ձեռք կբերվի հիմնականում արտադրության տեխնոլոգիայի բարելավման, աշխատանքի մեքենայացման և ավտոմատացման արմատավորման հաշվին։

Ժամանակակից տեխնիկական առաջընթացի հիմնական ուղղությունը, նրա ամենից ավելի բնորոշ գիծը, ինչպես հայտնի է, էլեկտրոնային տեխնիկայի կիրառմամբ արտադրության կոմպլեքսային մեքենայացման և ավտոմատիկ ղեկավարման անցնելն է։ Այդ պատճառով էլ ՍՄԿՊ XXI համագումարը հատուկ ուշադրություն նվիրեց ավտոմատիկայի և էլեկտրոնիկայի միջոցների արտադրության զարգացմանը, գիտության ու տեխնիկայի վերջին նվաճումների հիման վրա նորագույն մեքենաների ստեղծմանը։

Շնորհիվ նյութական և աշխատանքային միջոցների առկայության, վերջին տարիներին Հայաստանում հիմքեր են ստեղծվել արդյունաբերության երկու ժամանակակից ճյուղերի՝ սարքաշինության և ռադիոտեխնիկայի զարգացման համար։

Նորագույն տեխնիկայով սարքավորված ձեռնարկությունները կթողարկեն այնպիսի արտադրանք, որը վճռական դեր կկատարի արտադրության ավտոմատացման գործում և կիրառվում է ժամանակակից շատ մեքենաների մեջ, գիտության և տեխնիկայի բնագավառում։

Տեխնիկական առաջընթացի, արտադրության կուլտուրայի և աշխատանքի արտադրողականության բարձրացման համար մեծ նշանակություն կունենա էլեկտրոնային հաշվիչ մեքենաների կիրառությունը արտադրության մեջ։ Մաթեմատիկական մեքենաների ինստիտուտը մշակում է «Արագած», «Երևան» և այլ մարկայի հաշվիչ մեքենաների նմուշները։

Յոթնամյակի ընթացքում ռեսպուբլիկայի ռադիոտեխնիկական արդյունաբերության գործող ձեռնարկությունների շարքը կմտնեն սելենային ուղղիչների արտադրության գործարանները և այլն։

Հետագա արագ զարգացում կունենա հաստոցաշինական և գործիքաշինական արդյունաբերությունը։

1965 թ. հաստոցների ընդհանուր թողարկումը Հայաստանում կկազմի միութենական թողարկման 13%-ը, այսինքն Միության մեջ ռեսպուբլիկան կլինի 4-րդ տեղը։

Ռեսպուբլիկայում կթողարկվի 42 տեսակ մետաղահատ հաստոց, այդ թվում՝ շրջատաշ-պտուտակահան, լայն ունիվերսալ ֆրեզերային, կլոր հղկիչ, ներտաշիչ, շառավղա-գայլիկոնիչ, փոքր չափսի ճշգրիտ հաստոցներ ժամացույցների և սարքաշինության համար, ինչպես նաև բարդ հատիչ մեքենա և ունիվերսալ տեխնոլոգիական սարքավորում մետաղամշակման ձեռնարկությունների համար։ Հաստոցները լինելու են նորագույն կոնստրուկցիայի, բարձր ճշգրիտ և արագ գործող ավտոմատիկ բեռնավորումով, պիտանի ավտոմատիկ գծերում օգտագործելու համար։

Յոթնամյակի ընթացքում կկառուցվեն և շահագործման կհանձնվեն 19 նոր մերենաշինական ձեռնարկություններ։

Սակայն ինչպես ցույց է տրված ՍՄԿՊ XXI համագումարի որոշումներում, արտադրանքի թողարկման [illegible] է ոչ միայն նոր ձեռնար-

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

կություններ գործարկելու հաշվին։ Մի շարք ճյուղերի և հատկապես վերամշակող արդյունաբերության նկատմամբ հիմնական ուղղությունը առաջիկա տարիներին լինելու է գործող ձեռնարկությունների արմատական վերակառուցումը, ընդլայնումը և տեխնիկական վերասարքավորումը։ Դա հնարավորություն կտա զգալիորեն ավելի քիչ դրամական և նյութական ծախսերով և ավելի արագ քան նոր ձեռնարկություններ կառուցելու դեպքում, ավելացնել արտադրանքի թողարկումը։

Համագումարի այս ցուցումների համաձայն, յոթնամյակի ընթացքում ռեսպուբլիկայի բոլոր խոշոր ձեռնարկությունները կվերակառուցվեն և զգալիորեն կընդլայնվեն։ Ձեռնարկությունների վերակառուցումը կիրականացվի տեխնիկայի և տեխնոլոգիայի հետագա կատարելագործման, արդիացման և բարձր արտադրողական սարքավորման, կոմպլեքսային մեքենայացման ներդրման և արտադրության ավտոմատացման բազայի վրա։

Ռեսպուբլիկայի մեքենաշինական գործարանում կարմատավորվեն մշակման հոսքային մեթոդներ, լայնորեն կկիրառվեն ագրեգատային ավտոմատ և կիսաավտոմատ հաստոցներ ու գծեր, ինչպես նաև մեքենաների կոնվեյերային հավաքում։

Էլեկտրատեխնիկական արդյունաբերության ձեռնարկություններում կարմատավորվեն կարելիների անընդհատ վուլկանացման ագրեգատներ, շիկվածքների ներկում էլեկտրաստատիկ դաշտում, կավտոմատացվեն ռետինե խառնուրդի պատրաստման պրոցեսները, էլեկտրալամպերի հավաքումը և այլն։

Ծրագրվում է մեքենայացնել ժամացույցների դետալների լվացումը ուլտրաձայնային հարմարանքների վրա։

Արտադրության աճի և աշխատանքի բոլոր որակական ցուցանիշների բարձրացման գլխավոր ուղիներից մեկը, ինչպես հայտնի է, ձեռնարկությունների մասնագիտացումն է, որը ստեղծում է արտադրության կատարելագործման, տեխնիկական արագ առաջընթացի և աշխատանքի արտադրողականության բարձրացման իսկապես անսահմանափակ հնարավորություններ։

Արդյունաբերության ղեկավարման վերակառուցումը հատկապես բարենպաստ պայմաններ ստեղծեց արտադրության հետագա զարգացման ու կոնցենտրացման համար։

Յոթնամյա պլանում այդ հարցերին մեծ ուշադրություն է նվիրված։ Այսպես, Ձերժինսկու անվան հաստոցաշինական գործարանը, որն այժմ մի քանի տեսակի հաստոցներ է թողարկում, մասնագիտանում է մի տիպի՝ 320 մմ տրամագիծ ունեցող սարքավորումների համար շրջատաշ-պտուտակահան հաստոցների թողարկման մեջ։

Երևանի ֆրեզերային հաստոցների նոր կառուցվող գործարանը թողարկելու է լայն ունիվերսալ ֆրեզերային հաստոցներ, Լուսավանի հաստոցագործարանը մասնագիտանում է հորիզոնական-ներտաշիչ հաստոցների արտադրման մեջ, Լենինականինը՝ բարձր ճշգրտության 200 մմ տրամագծանոց կլոր հղկիչ հաստոցներ արտադրելու մեջ, իսկ Կիրովականինը՝ փոքր չափսի ճշգրիտ հաստոցների արտադրության մեջ։

Բացի այդ, նախատեսվում է կազմակերպել հարակից մասնագիտացված ձեռնարկություններ մետաղահատ հաստոցների համար կոմպլեկտավորող

տանգույցներ և դետալներ՝ պոմպեր, հիդրոպանելներ, փականներ, ամրատման նորմալներ և այլն արտադրելու համար։

Ծանր արդյունաբերության զարգացման բարձր մակարդակի և գյուղատնտեսական արտադրության մեծ հաջողությունների հիման վրա ՍՄԿՊ XXI համագումարը խնդիր դրեց մոտակա տարիներին ավելացնել ժողովրդական սպառման առարկաների արտադրությունը, նպատակ ունենալով յոթնամյակի ընթացքում լիովին բավարարել բնակչության պահանջմունքները գործվածքների, հագուստի, կոշկեղենի և այլ ապրանքների ասպարեզում։

Սրանից ելնելով, ռեսպուբլիկայի թեթև արդյունաբերության ձեռնարկությունները, նոր սինթետիկ նյութերի՝ ացետատային մետաքսի, կապրոնե թելի և այլ նյութերի արտադրության կազմակերպման հիման վրա, յոթնամյակի ընթացքում զգալիորեն կավելացնեն բամբակյա, բրդյա և մետաքսյա գործվածքների, գուլպեղենի, սպիտակեղենի, տրիկոտաժի, կոշկեղենի և ժողովրդական սպառման այլ առարկաների թողարկումը։ Հայաստանը վաղուց ի վեր հայտնի է իր հիանալի բարձրորակ գորգերով։ Յոթնամյակի ընթացքում գորգերի և գորգատիպ գործվածքների արտադրությունը կավելանա ավելի քան 5 անգամ։

Ժողովրդական սպառման ապրանքների արտադրությունն ավելացնելուն զուգընթաց ռեսպուբլիկայի թեթև արդյունաբերության ձեռնարկությունների առաջնահերթ խնդիրն է դառնում արտադրանքի որակի և ասորտիմենտի խիստ լավացումը։ Ժողովրդական սպառման ապրանքները պետք է լինեն բարձրորակ, գեղեցիկ և նուրբ։ Զգալիորեն կավելանա այն ապրանքների արտադրությունը, որոնց պահանջը բնակչության մեջ մեծ է։

Պարենային ապրանքների նկատմամբ աշխատավորների ունեցած անընդհատ աճող պահանջմունքների լիակատար բավարարման մասին Կոմունիստական պարտիայի տված ցուցումների համաձայն, յոթնամյակի ընթացքում ավելի կզարգանան սննդի արդյունաբերության բոլոր ճյուղերը։ Ավելի քան 2 անգամ կավելանա մսի և կաթնեղենի արտադրությունը, համարյա 2 անգամ կավելանա գինու և մրգա-բանջարեղենային պահածոների թողարկումը։ Զգալիորեն կավելանա կոնյակների, գարեջրի, ոչ ալկոհոլային խմիչքների, հանքային ջրերի, թխվածքեղենի, հացարուլկեղենի, ծխախոտի և մյուս ապրանքների արտադրությունը։ Սննդամթերքների արտադրությունն ավելացնելուն զուգընթաց մեծ ուշադրություն է նվիրվելու նրանց որակը բարձրացնելուն։

Արդյունաբերության բոլոր ճյուղերի մեծ աճը, որ նախատեսված է յոթնամյակում, էներգետիկայի շատ ավելի մեծ զարգացում է պահանջում։

ՍՄԿՊ XXI համագումարի որոշումներում 1959—1965 թթ. երկրի էներգետիկայի զարգացման գլխավոր ուղղությունը լինելու է գերազանցապես ջերմաէլեկտրակայանների կառուցումը էժան ածխի, բնական գազի և մազութի բազայի վրա, սրանով կապահովվի ժամանակի զգալի տնտեսումը և կապիտալ ներդրումների առավել էֆեկտիվ օգտագործումը։

Այդ պատճառով էլ Հայաստանի էներգետիկ բազայի հետագա զարգացումը չի կարող ընթանալ միայն հիդրոէներգետիկայի և առավել ևս Սևանա լճի ջրերի արագացված թողարկման հաշվին, քանի որ լճի ջրի մակարդակը բնականին մոտ սահմաններում պահպանելը ռեսպուբլիկայի համար կարևոր տնտեսական նշանակություն ունի։ Մոտ ժամանակներում եղբայրական Ադրբեջանից բնական գազ ստանա ու շնորհիվ ռեսպուբլիկայի էներգետիկայի զար-

գացման հարցը նոր դրվածք է ստանում։ Յոթնամյա պլանում նախատեսվում է էներգետիկ խնդիրների կոմպլեքսային լուծում, որն ընդգրկելու է էլեկտրական, ջերմային և գազի էներգիայի օգտագործման հարցերը։

Էլեկտրաէներգիայի պահանջը ժողովրդական տնտեսության մեջ 1965 թ. 1958 թ. մակարդակի համեմատությամբ կավելանա 1,8 անգամ։ Այդ պահանջը բավարարելու համար 1959—1965 թթ. ստացվող բնական գազի բազայի վրա խոշոր ջերմաէլեկտրակայաններ կկառուցվեն Երևանում ու Հրազդանում և կավարտվի Աթարբեկյանի ու Երևանի հիդրոէլեկտրակայանների կառուցումը, որոնք շահագործման կհանձնվեն համապատասխանաբար 1959 և 1960 թթ.։

Ծրագրված է կառուցել Տաթևի հիդրոկայանը Որոտան գետի վրա, որը կլինի ամենաբարձր ճնշումային հիդրոէլեկտրակայանը երկրում, 600 մետր ճնշումով։ Այս հիդրոկայանը կապահովի Հարավային Հայաստանի էլեկտրամատակարարումը, որը մինչև այժմ էլեկտրաէներգիայի սեփական հզոր աղբյուր չուներ և զգալիորեն հետու էր էներգոսիստեմի հիմնական մասից։ Յոթնամյակի ընթացքում Անդրկովկասի էներգոսիստեմները կմիացվեն։ Այդ կապակցությամբ 1960 թ. սկզբին շահագործման կհանձնվի Ապստաֆա—Աթարբեկյան 330 կիլովատանոց էլեկտրահաղորդման գիծը։

Բոլոր այս միջոցառումների իրականացումը կապահովի էլեկտրաէներգիայի պահանջի բավարարումը ժողովրդական տնտեսության մեջ, բացի այդ թույլ կտա 1965 թ. սկսած կրճատել Սևանա լճի ջրերի բաց թողումը, այդ կատարելով միայն ոռոգման նպատակով, որի շնորհիվ լճի ջրի մակերևույթը կպահպանվի հնարավոր ամենաբարձր մակարդակի վրա։

Յոթնամյակի վերջում էլեկտրակայանների հզորությունը 2 անգամ ավելի կլինի 1958 թ. գոյություն ունեցող բոլոր էլեկտրակայանների հզորությունից։

Հիդրոէլեկտրակայանների աշխատանքի բարելավման և ռեսպուբլիկայի ողջ հիդրոէներգետիկ սիստեմի ռացիոնալ շահագործման նպատակով մոտակա տարիներին կիրականացվի բոլոր կայանների և խոշոր ենթակայանների ավտոմատ կառավարումը՝ տելեմեխանիկայի և էլեկտրոնային հաշվիչ մեքենաների կիրառմամբ։

1959—1965 թթ. ռեսպուբլիկայում արագ թափով կծավալվի ջերմային էներգիայի և գազի օգտագործումը։

Կենտրոնացված ջերմամատակարարումը կապահովի տեխնոլոգիական շոգու պահանջը քիմիական արդյունաբերության ձեռնարկություններում և արհեստական ու սինթետիկ թելերի ու պլաստմասսաների արտադրության զարգացումը։

Ծրագրված է 1960 թ. սկսած, Երևան, Լենինական, Կիրովական, Դիլիջան բաղաքները և Ապստաֆա — Երևան գազամուղի գծի վրա գտնվող Հրազդան, Սևան, Իջևան ավանները ապահովել բնական գազով, իսկ ռեսպուբլիկայի մի շարք այլ քաղաքներն ու ավանները, այդ թվում Ղափան և Ալավերդի բաղաքները՝ հեղուկ գազով։

Յոթնամյակի ընթացքում բնական և հեղուկ գազով կապահովվեն աշխատավորների ավելի քան 100 հազ. բնակարաններ, ինչպես նաև առողջապահության, հասարակական սննդի և այլ հաստատություններ։

Հայաստանում վառելիքի աղբյուրների բացակայության պայմաններում բնական գազ ստանալը բացառիկ կարևոր նշանակություն ունի ռեսպուբլիկայի ժողովրդական տնտեսության զարգացման գործում։

Կոմունալ կենցաղային օբյեկտների սպասարկումը գազով՝ շեշտակիորեն կբարելավի բնակչության կյանքի հիգիենիկ-սանիտարական պայմանները և, միաժամանակ, զգալի տնտեսում կտա և՛ պետությանը, և՛ բնակչությանը։

Ռեսպուբլիկայի հարուստ բնական միջոցների ռացիոնալ օգտագործմանը զուգընթաց, յոթնամյա պլանով նախատեսվում է բարելավել արտադրողական ուժերի տեղաբաշխումը, ձեռնարկությունները հումքի աղբյուրներին և սպառման շրջաններին մոտեցնելու և նոր ձեռնարկությունները գերպանցապես թույլ զարգացած արդյունաբերություն ունեցող շրջաններում կառուցելու ճանապարհով, հաշվի առնելով նաև հումքային և աշխատանքային միջոցների առկայությունը։ Արդյունաբերական նոր ձեռնարկությունները տնտեսապես նպատակահարմար ձևով տեղաբաշխելու հետևանքով, Երևանում, Լենինականում, Կիրովականում, Ալավերդում, Ղափանում արդյունաբերության հետագա զարգացմանը զուգընթաց, յոթնամյակի ընթացքում ռեսպուբլիկայում կստեղծվեն նոր արդյունաբերական կենտրոններ՝ Հրազդան, Լուսավան, Էլար, Արզնի, Սևան և այլն։ Նրանց արդյունաբերության բուռն զարգացմանը մեծապես կնպաստի Երևան—Սևան երկաթուղին, որի շինարարությունն ընթացիկ տարում կավարտվի։ Նոր խոշոր արդյունաբերական ձեռնարկություններ կկառուցվեն Դիլիջանում, Իջևանում, Ագարակում, Ստեփանավանում, Գորիսում, Հոկտեմբերյանում, Թալինի, Աղինի, Մեղրու և այլ շրջաններում։

Արդյունաբերական նոր ձեռնարկությունների տեղաբաշխման նման սկզբունքը կապահովի ռեսպուբլիկայի բոլոր շրջանների տնտեսության ու կուլտուրայի վերելքը, շեշտակիորեն կփոխի գյուղական շրջանների կերպարանքը և կնպաստի աշխատավորների նյութական բարեկեցության հետագա վերելքին։

* * *

Սովետական Միության Կոմունիստական պարտիայի XXI համագումարի և ՍՄԿՊ ԿԿ Դեկտեմբերյան պլենումների որոշումները մեծ և պատվավոր խնդիրներ են դնում Հայաստանի գյուղատնտեսության աշխատողների առաջ։

Յոթնամյա պլանի կենսագործման հետևանքով Հայկական ՍՍՌ-ն կդառնա բարձր զարգացած խաղողագործություն, պտղաբուծություն, տնասնաբուծություն, ծխախոտագործություն և բանջարաբուծություն ունեցող ռեսպուբլիկա։ Գյուղատնտեսության այնպիսի արժեքավոր ճյուղեր, ինչպիսիք են բամբակագործությունը և ճակնդեղագործությունը, կպահպանեն իրենց լուրջ տնտեսական նշանակությունը։

Ծրագրվում է յոթնամյակի ընթացքում խաղողագործությունը Հայաստանում զարգացնել մինչ այժմ չտեսնված տեմպերով, նոր ոռոգվող հողերի բացայի վրա։ Խաղողի և պտղատու այգիների տարածությունները 1958 թ. համեմատությամբ ընդլայնվելու են ավելի քան 2 անգամ։ Գցվող այգիների հիմնական մասը լինելու է Դեբեդայթս գիրատանապատների և սակավ արդյունավետ ձմեռային արոտների ընդարձակ տարածություններում, որոնք ոռոգվելու են կառուցվող 3 խոշոր ջրանցքներով՝ Թալինի, Արզնի-Շամիրամի և Կոտայքի։ Այդ հողերի սակավ բնակվածության հետևանքով նրանց յուրացումը կգնա խաղողա-պտղաբուծական սովխոզներ կազմակերպելու ճանապարհով։ Այս նոր ջրովի հողերը բնակեցնելու համար մի շարք տնտեսապես թույլ զարգացած կոլտնտեսություններ կվերաբնակեցվեն։ Վերջին տարիներին գյուղա-

տնտեսության բոլոր ընագավառներում ձեռք բերված նկատելի հաջողությունների հետևանքով այդպիսի թույլ կոլտնտեսությունների թիվը ռեսպուբլիկայում շեշտակիորեն կրճատվել է։ Նախկինում հետամնաց շատ կոլտնտեսություններ, պետությունից օգնություն ստանալուց, ղեկավար կադրերով ապահովվելուց հետո տնտեսապես ամրացան։ Չնայած դրան, ռեսպուբլիկայում դեռևս կան լեռնային շրջաններում գտնվող մի շարք կոլտնտեսություններ, որոնք ջրովի հողեր չունեն և ցանքերը հաճախ ենթարկվում են տարերային աղետների (ցրտահարություն, կարկտահարություն, երաշտ)։ Ռելիեֆի կտրտվածությունը և հողերի քարքարոտությունը թույլ չեն տալիս բարձրացնել գյուղատնտեսական աշխատանքների մեքենայացման աստիճանն այդ կոլտնտեսություններում։ Այսպիսով, այդ կոլտնտեսությունների մեծ մասը գյուղատնտեսական արտադրության հետագա զարգացման համար անհրաժեշտ պայմաններ չունի։ Նրանց կազմակերպած վերաբնակեցումը դեպի ռեսպուբլիկայի ցածրադիր շրջանները, նոր ոռոգվող հողերում կազմակերպվող խաղողա-պտղաբուծական սովխոզներում աշխատելու համար, կհանդիսանա յոթնամյակի ընթացքում Հայաստանի գյուղատնտեսության զարգացման ամենախոշոր միջոցառումներից մեկը, քանի որ մի կողմից կապահովի գյուղատնտեսության առաջատար ճյուղերի՝ խաղողագործության ու պտղաբուծության հետագա զարգացումը, և, մյուս կողմից, Հայաստանում վերջնականապես կվերացնի տնտեսապես հետամնաց կոլտնտեսությունները։

Պտղաբուծությունը կընդլայնվի նաև ի հաշիվ բավական ինտենսիվ առաջխաղացման դեպի ռեսպուբլիկայի լեռնային շրջանները, որտեղ այդ ճյուղը դեռևս սաղմնային վիճակում է։

Այգիների տարածությունն ընդլայնելուն զուգընթաց նախատեսվում է հողագործության կուլտուրան բարելավելու ճանապարհով շեշտակիորեն բարձրացնել խաղողի և մրգատու այգիների բերքատվությունը։ Այս ամենի հետևանքով խաղողի համախառն բերքը 7 տարվա ընթացքում կավելանա 2,8 անգամ, իսկ մրգեղենինը՝ 2,7 անգամ։ Նոր դցվող այգիների ողջ տարածությունը պտղատվության շրջան մտնելուց հետո խաղողի համախառն արտադրանքը ռեսպուբլիկայում 1958 թ. փաստական բերքի համեմատությամբ կավելանա 4 անգամ, իսկ մրգեղենինը՝ 6 անգամ։ 1965 թ. արդեն հնարավորություն կստեղծվի արդյունաբերական վերամշակման հանձնել ավելի քան 2 անգամ շատ խաղող, քան 1958 թ., իսկ խաղողի այգիների ողջ տարածության պտղատվության շրջան մտնելուց հետո խաղողի արդյունաբերական վերամշակման ծավալը կավելանա համարյա 5 անգամ։ Նախատեսվում է 1965 թ. 4 անգամ ավելացնել պահածոների գործարանում վերամշակվող մրգեղենի արտադրությունը, իսկ բոլոր նոր այգիների պտղատվությունից հետո մրգեղենի արդյունաբերական վերամշակման ծավալը կավելանա 16 անգամ։

Սրան զուգընթաց 1965 թ. արդեն, ի հաշիվ պետական հանձնումների, շեշտակիորեն կավելանա թարմ վիճակում օգտագործվող մրգեղենի և խաղողի քանակը. խաղողինը՝ ավելի քան 5 անգամ, իսկ մրգեղենինը՝ համարյա 4 անգամ։

Խաղողի և մրգեղենի արտադրության այսպիսի աճը հնարավորություն կտա զգալիորեն ավելացնել գինիների, կոնյակների, զանազան հյութերի և մրգի պահածոների արտադրությունը, որոնց լավագույն տեսակները մեծ հան-

յավ ունեն ինչպես Սովետական Միությունում, այնպես էլ նրա սահմաններից դուրս։

Հայաստանի հացահատիկային տնտեսությունը միշտ էլ մեծ նշանակություն է ունեցել նրա գյուղատնտեսության մեջ։

Հայկական լեռնաշխարհի տերիտորիան եղել է հողագործության համաշխարհային այն օջախներից մեկը, որտեղից սկսվել է ցորենի և մի շարք այլ հացա-յորդի բույսերի մշակությունը։ Սակայն ներկայիս Հայաստանում, նրա սակավահողության պատճառով, հացահատիկի արտադրությունը չի կարող ապրանքային նշանակություն ունենալ։ Կոմունիստական պարտիան առանձնահատուկ ուշադրություն է նվիրում գյուղատնտեսական արտադրության հիշտ մասնագիտացմանը։ Սրանից ելնելով մեր ռեսպուբլիկան և մի շարք այլ ռեսպուբլիկաներ, որտեղ տնտեսապես ձեռնտու չէ ընդլայնել հացահատիկային բույսերի մշակությունը, ազատված են պետությանը հացահատիկ վաճառելուց։ Այս միջոցառումը, ինչպես նաև հացահատիկի բերքատվության և համախառն բերքահավաքի բարձրացումը ռեսպուբլիկայում պետք է ապահովեն մթերային և ֆուրաժային հացահատիկի բնագավառում կոլտնտեսությունների և սովխոզների ունեցած սեփական կարիքների բավարարումը։

Այս կարևորագույն միջոցառումը զգալիորեն կնպաստի նաև ցանքաշրջանառության ճիշտ կիրառմանը, գյուղատնտեսական մշակույթների ռացիոնալ տեղաբաշխմանը, կերաբույսերի, հատկապես բազմամյա խոտերի ցանքատարածությունների ընդլայնմանը և համայնական տնտեսության համար կայուն կերային բազայի ստեղծմանը։

Ծխախոտագործությունը Հայաստանում Սովետական իշխանության ծընունդն է և զարգացել է կոլտնտեսային արտադրության պայմաններում։ Դա մեր գյուղատնտեսության արժեքավոր և բարձր եկամտաբեր ճյուղերից մեկն է։

Ռեսպուբլիկայի շատ լեռնային կոլտնտեսություններում ծխախոտագործությունը դրամական եկամուտների գլխավոր աղբյուրներից մեկն է։ Յոթնամյակի ընթացքում ծխախոտի տերևի համախառն արտադրանքը կաճի 20%-ով Ըստ որում, հիմնական շեշտը դրվելու է բերքատվության բարձրացման վրա, որը կհասնի հեկտարից 15—16 ցենտների։

Ռեսպուբլիկայում մեծ թափով պետք է զարգանան բանջարաբուծությունն ու կարտոֆիլագործությունը։ Բանջարեղենի և կարտոֆիլի արտադրության մասշտաբները որոշելիս խնդիր է դրվել 1965 թ. օպտիմալ չափերով ապահովել այդ մթերքների օգտագործումը բնակչության կողմից, պահածոների արդյունաբերությունը ապահովել բանջարեղենի հումքով և անհրաժեշտ քանակությամբ կարտոֆիլ հատկացնել անասնակերի համար։

Հատուկ ուշադրություն է նվիրված բանջարաբուծության զարգացմանը Երևանի քաղաքամերձ գոտում։ Ծրագրված է ապահովել Երևանի բնակչությանը էժան գներով վաղահաս բանջարեղեն և կարտոֆիլ մատակարարելու գործը (յուրաքանչյուր շնչին՝ 120 կգ), մասնագիտացված սովխոզներ կազմակերպելու ճանապարհով։ Լենթացիկ տարում արդեն կազմակերպված է 2 այդպիսի սովխոզ։ Մոտակա տարիների ընթացքում կկազմակերպվեն մի շարք այդպիսի սովխոզներ՝ Երևանը և ռեսպուբլիկայի մյուս քաղաքներն ու արդյունաբերական կենտրոնները բանջարեղենով լիակատար կերպով ապահովելու համար։

Գյուղատնտեսական բոլոր մշակույթների կայուն ու բարձր բերք ստանալը, արտադրանքի համախառն բերքահավաքը նշված չափերին հասցնելը ձեռք կբերվի շնորհիվ այն բանի, որ ռեսպուբլիկայի յուրաքանչյուր գյուղատնտեսական գոտում, կոլտնտեսություններում և սովխոզում կարմատավորվի հողագործության՝ գիտականորեն հիմնավորված համապատասխան սիստեմ, ավելի կրարելավվի գյուղատնտեսական արտադրության տեղադրաշխումը և լայնորեն կկիրառվեն գիտության և առաջավոր փորձի նվաճումները։

Յոթնամյակում մեծ ուշադրություն է հատկացվում ռեսպուբլիկայի գյուղատնտեսության առաջատար ճյուղերից մեկի՝ անասնապահության հետագա զարգացմանը։

Անասնակերի կայուն բազա ստեղծելու համար ծրագրված է զգալիորեն ավելացնել կերարույսերի, առաջին հերթին եգիպտացորենի ցանքատարածությունները։ Կերարույսերի ցանքատարածություններն ընդարձակելուն զուգընթաց մեծ աշխատանք կտարվի դրանց բերքատվության բարձրացման ուղղությամբ։ Հայաստանի պայմաններում կերի պաշարների մեծացման խոշորագույն աղբյուր են բնական արոտներն ու մարգագետինները։

Այս բոլոր միջոցառումները, հողի կառուցվածքի և անասունների ցեղական կազմի հետագա բարելավման, ամլության վերացման և այլ անհրաժեշտ ձեռնարկումների հետ միասին կապահովեն անասնապահական ապրանքների արտադրության շեշտակի աճը։ 1965 թ. մսի արտադրությունը 1958 թ. համեմատությամբ կաճի 1,7 անգամ, կաթինը՝ 1,6 անգամ, ձվինը՝ 1,5 անգամ և բրդինը՝ 1,3 անգամ։

Գյուղատնտեսական հողատարածությունների յուրաքանչյուր 100 հեկտարից 1965 թ. արտադրվելու է 53 ցենտներ միս (մորթելաքաշով), 368 ցենտներ կաթ, 1,7 ցենտներ բուրդ և 68,0 հազ. ձու՝ 100 հեկտար հացահատիկային ցանքատարածությունից։

Բացի այդ, ծրագրվում է շեշտակիորեն ավելացնել բոլոր տեսակի անասունների և թռչունների գլխաքանակը։ 1965 թ. խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը 1958 թ. համեմատությամբ պետք է աճի 61%-ով, այդ թվում կովերինը՝ 123%-ով, ոչխարներինը և այծերինը՝ 21,5%-ով, թռչուններինը՝ 116,3%-ով։ Յոթնամյակի վերջում կոլտնտեսություններում յուրաքանչյուր 100 հեկտարին պետք է ընկնի 50 գլուխ խոշոր եղջերավոր անասուն, այդ թվում կովեր՝ 20 գլուխ, իսկ քաղաքամերձ կոլտնտեսությունների կաթնատնտեսային ֆերմաներում՝ 25 գլուխ։

Խնդիր է դրվում ռեսպուբլիկայի բոլոր շրջաններում ստեղծել ցեղական անասունների օրինակելի սովխոզներ ու կոլտնտեսային ֆերմաներ, տնտեսություններին ցեղական մատղաշներ մատակարարելու համար։

Գյուղատնտեսական արտադրության վերելքը կատարվելու է կոլտնտեսությունների ու սովխոզների հետագա մեքենայացման ու էլեկտրիֆիկացման բազայի վրա։

1960 թ. լիովին կավարտվի ռեսպուբլիկայի բոլոր կոլտնտեսությունների, սովխոզների, բանվորական ավանների և մյուս բնակավայրերի էլեկտրիֆիկացումը։ Առանձին գյուղատնտեսական պրոցեսների մեքենայացման մակարդակը 1959—1965 թթ. ընթացքում բարձրացվելու է. վարի աշխատանքներինը՝ 87,92%, հեռաշար կուլտուրաների միջշարքային մշակմանը՝ 59%-ից 86%, այդ թվում ծխախոտինը՝ մինչև 47%, հացահատիկային կոմբայններով

բերքահավաքմանը՝ 65—89%, խոտհնձինը՝ 28—45%։ Կրարձրանա նաև հյուս աշխատանքների մեքենայացման մակարդակը։

Յոթնամյակի ընթացքում զգալիորեն կմեծանա տրակտորների, կոմբայնների, հացահատիկային կոմբայնների, խոտհնձիչ և գյուղատնտեսական այլ մեքենաների պարկը։

Անասնապահական ֆերմաներում լայնորեն մեքենայացվելու են աշխատատար պրոցեսները, 1959—1965 թթ. ընթացքում ջրամատակարարման մեքենայացումը կոլտնտեսային ֆերմաներում ծրագրվում է հասցնել 90%-ի, կովերի էլեկտրակիթը՝ 30%-ի, ավտոմատ ջրումը՝ 80%-ի, ոչխարների էլեկտրախուզը՝ 100%-ի, իսկ սովխոզներում՝ ջրամատակարարումը և ավտոմատ ջրումը՝ 95—100%-ի, էլեկտրակիթը՝ 25%-ի և էլեկտրախուզը՝ 100%-ի։

Այս բոլոր միջոցառումները թույլ կտան թեթևացնել կոլտնտեսականների և սովխոզների բանվորների աշխատանքը, այն դարձնել ավելի արտադրողական։

Աշխատանքի արտադրողականության բարձրացման անմիջական արդյունքը կլինի գյուղատնտեսական արտադրանքի յուրաքանչյուր միավորի վրա ծախսված աշխատանքի կրճատումը, որը բերքատվության և անասունների մթերատվության բարձրացման հետ միասին կիջեցնի գյուղատնտեսական արտադրանքի ինքնարժեքը։

Կոլտնտեսային արտադրության մասնագիտացման և մեքենայացման ամեն տեսակ զարգացումը, աշխատանքի արտադրողականության բարձրացումը և արտադրանքի ինքնարժեքի իջեցումը, մի շարք կազմակերպչական միջոցառումների իրականացումը կոլտնտեսությունների տնտեսական ամրապնդման ուղղությամբ, կապահովեն կոլխոզների և կոլտնտեսականների եկամուտների մեծ աճը։ Ռեսպուբլիկայի կոլտնտեսությունների համախառն եկամուտները յոթնամյակի ընթացքում կաճեն ավելի քան 2 անգամ։ Կոլխոզների հանրային հարստության աճի և նրանց եկամուտների ավելացման հիման վրա նշանակալից չափով կավելանան կոլտնտեսային գյուղացիության եկամուտները և շատ ու շատ կրարձրանա գյուղի աշխատավորների նյութական բարեկեցությունը։

Տարեց-տարի աճելու են կապիտալ ներդրումները գյուղատնտեսության մեջ։ Յոթնամյակի ընթացքում ռեսպուբլիկայի կոլտնտեսությունները կուտուր-կենցաղային շինարարության մեջ կներդնեն ավելի քան 2 միլիարդ ռուբլի, այսինքն համարյա այնքան, որքան նրանք ներդրել են իրենց գոյության ողջ ընթացքում։

Կոլտնտեսականներն ու կոլտնտեսուհիները, սովխոզների ու վերանորոգման տեխնիկական կայանների բանվորները, Հայաստանի գյուղատնտեսության մասնագետները, կոմունիզմի ծավալուն շինարարության փառահեղ ծրագրով ոգեշնչված, ներգրավվել են համաժողովրդական շարժման մեջ՝ հանուն գյուղատնտեսական ապրանքների արտադրության ավելացման։

* * *

Մեր երկրում քաղաքական, սոցիալական և տնտեսական արմատական վերափոխումներ իրականացնելու, սոցիալիստական արտադրության և աշխատանքի արտադրողականության բուռն աճի հետևանքով, անընդհատ բարձրանում է սովետական ժողովրդի կենսական և կուլտուրական մակարդակը։

Հոգատարությունը սովետական ժողովրդի բարեկեցության, ողջ հասարակության նյութական և կուլտուրական անընդհատ աճող պահանջմունքների ամենալիակատար բավարարման մասին՝ Կոմունիստական պարտիայի և Սովետական կառավարության գործունեության բարձրագույն օրենքն է։

Սոցիալիստական հասարակարգում, ուր տիրապետում է արտադրության միջոցների հասարակական սեփականությունը և վերացված է մարդու կողմից մարդու շահագործումը, արտադրության նպատակը գյուղի և քաղաքի աշխատավորների բարեկեցության անշեղ բարձրացման համար նյութական բարիքների առատություն ստեղծելն է։

Այժմ, երբ մեր երկիրը թևակոխել է իր զարգացման նոր շրջանը, կոմունիզմի ծավալուն կառուցման շրջանը, երբ մեր երկրում ստեղծված է հզոր ծանր արդյունաբերություն և խոշոր գյուղատնտեսական արտադրություն, Կոմունիստական պարտիայի XXI համագումարը, ելնելով սոցիալիզմի հիմնական տնտեսական օրենքից, նշել է բոլոր աշխատավորների բարեկեցության հետագա զգալի բարձրացման լայն ծրագիր։ Այդ ծրագրի նպատակն է մեր երկրում ժողովրդական սպառման ապրանքների բավարար քանակ, ապա նաև առատություն ստեղծելը։

Ինչպես հայտնի է, ժողովրդի բարեկեցության կարևորագույն ընդհանրացնող ցուցանիշներից մեկը ազգային եկամտի աճն է։ Ազգային եկամուտը մեր երկրում իսկապես ժողովրդական է, պատկանում է ողջ ժողովրդին ու բաշխվում է քաղաքի և գյուղի բոլոր աշխատավորների շահերին համապատասխան։

Երկրի ազգային եկամուտը յոթնամյակի ընթացքում կավելանա 62—65%-ով, որը 6 անգամ գերազանցում է նախապատերազմյան 1940 թ. ազգային եկամտի մակարդակը։ Սա հնարավորություն կտա 60—63%-ով ավելացնել ժողովրդական սպառման ծավալը։

Մարքսիզմ-լենինիզմը սովորեցնում է, որ այս կամ այն հասարակական-տնտեսական ֆորմացիայում ազգային եկամտի բաշխման եղանակը պայմանավորված է արտադրության և արտադրության միջոցների բաշխման եղանակով։

Կապիտալիստական հասարակարգում, որի հիմքը կազմում է արտադրության միջոցների մասնավոր սեփականությունը և աշխատավորների շահագործումը, ազգային եկամուտը բաշխվում է հօգուտ շահագործող դասակարգերի՝ մի խումբ կապիտալիստների։ Ժամանակակից մոնոպոլիստական արտադրության բարձրագույն նպատակը, ինչպես հայտնի է, մաքսիմալ շահույթի ստացումն է, այդ պատճառով մարդը և նրա պահանջմունքները հետաքրքրում են կապիտալիստներին սոսկ այնքանով, որքանով դրանք կարող են նպաստել մաքսիմալ շահույթի ստացմանը։ Մաքսիմալ շահույթի հետևից ընկնելով, կապիտալիստները յուրացնում են ազգային եկամտի աճյուծի բաժինը, իսկ աշխատավորների բաժինը տարեց-տարի կրճատվում է։ Այսպես, օրինակ, եթե աշխատավորների բաժինը ԱՄՆ-ում 1928 թ. կազմում էր ազգային եկամտի 54%-ը, ապա 1951 թ. այն իջավ 42%-ի։ 1955 թ. ԱՄՆ-ի բնակչության 92,6%-ը ստացավ ազգային եկամտի 34,6%-ը, իսկ մնացած 65,4%-ը յուրացվեց բնակչության 7,4%-ի կողմից։

Վերջին տարիներին, կապիտալիստական բոլոր երկրներում զգալիորեն իջել է ազգային եկամտի աշխատավորների բաժինը։ Այդ երկրներում տեղի

ունեցող սպառողինության մրցավազքը, ռազմական ծախսերի աճը խիստ մեծացնում են բնակչությունից գանձվող հարկերը, ծանր բեռի նման նստում են աշխատավորների ուսերին։

Սոցիալիզմը վերացնելով մարդու կողմից մարդու շահագործումը, աշխատավորների համար երջանիկ և ապահով կյանք է ստեղծում։ Սոցիալիստական հասարակարգում ազգային եկամուտը վեր է ածվել հասարակական սեփականության։ Ազգային եկամտի երեք քառորդը մեր երկրում, հասարակական և անձնական սպառման ֆոնդի ձևով ամեն տարի բաշխվում է սոցիալիստական հասարակության անդամների միջև։ Ազգային եկամտի իրավացի բաշխումը, նրա անշեղ աճը հնարավորություն են տալիս տարեց-տարի ավելացնել բանվորների, աշխատավորների և կոլտնտեսային գյուղացիության ռեալ եկամուտները։

Վերջին տարիների ընթացքում պարտիան և կառավարությունը խոշոր միջոցառումներն են ձեռնարկել սովետական ժողովրդի նյութական ու կուլտուրական մակարդակի հետագա բարձրացման ուղղությամբ։ Նշանակալից չափով մեծացվել են աշխատավորներին կենսաթոշակով ապահովելու չափերը, վերացվել է ուսման վարձը, ավելացվել է հղիության և ծննդաբերության համար տրվող արձակուրդի ժամկետը, նախահանգստյան և նախատոնական օրերին կրճատվել է աշխատանքային օրը, սկսված է բանվորներին ու ծառայողներին կրճատ աշխատանքային օրվա փոխադրելը, ավելացված է ցածր վարձատրվող բանվորների ու ծառայողների աշխատավարձը, զգալիորեն բարձրացվել է գյուղատնտեսական մթերքների մթերման գները, իսկ կոլտնտեսականների, բանվորների ու ծառայողների անձնական տնտեսությունները ազատված են պետական մթերումներից։

Բանվորների ու ծառայողների աշխատավարձը, կոլտնտեսականների դրամական և բնամթերային եկամուտները 1958 թվականին 1940 թ. համեմատությամբ աճել են 2 անգամ։

Ժողովրդական տնտեսության զարգացման յոթնամյա պլանը մեծ հեռանկարներ է բացում ժողովրդական սպառման ապրանքների արտադրության հետագա աճի, աշխատավորների ռեալ եկամուտների բարձրացման համար։ Բանվորների ու ծառայողների ռեալ եկամուտները 1959 թվականին 1958 թ. համեմատությամբ մեկ աշխատողին ընկնող եկամուտի հաշվով, կավելանան 40%-ով։ Բանվորների և ծառայողների նվազագույն աշխատավարձը ամսական 270 ռուբլուց կհասնի 500—600 ռուբլու։ Կոլտնտեսային գյուղացիության եկամուտները կավելանան 40%-ով և դա տեղի կունենա գլխավորապես ի հաշիվ կոլտնտեսությունների հասարակական տնտեսության։

Հայկական ՍՍՌ բնակչության դրամական եկամուտները յոթնամյակի ընթացքում կավելանան 47,3 %-ով։

Կոմունիստական պարտիան և Սովետական կառավարությունը ծրագրել և իրականացնում են լայն միջոցառումներ աշխատանքային օրվա կրճատման ուղղությամբ։

1959—1960 թթ. ընթացքում կավարտվի բանվորներին ու ծառայողներին յոթժամյա, իսկ բանվորների մի մասին՝ վեցժամյա աշխատանքային օրվա փոխադրումը։ Յոթնամյակի վերջերին կսկսվի բանվորներին ու ծառայողներին 30—35-ժամյա աշխատանքային շաբաթվա փոխադրելը։ Այսպիսով, ինչպես նշել է ՍՄԿՊ XXI հեռամատրում Ն. Ս. Խրուշչովը, ՍՍՌՄ-ում կլինի աշխարհի

ամենակարճ աշխատօրը և ամենակարճ աշխատանքային շաբաթը ժողովրդի բարեկեցության աճի հետ միասին։

Աշխատանքային ժամերի և շաբաթվա մեջ աշխատանքային օրերի քանակի կրճատումը իրականացվելու է ոչ միայն առանց աշխատավարձի նվազեցման, այլ նրա զգալի բարձրացման պայմաններում։ Սրան զուգընթաց, աշխատանքային օրվա կարճացումը աշխատավորներին հնարավորություն կտա ավելի շատ ուշադրություն հատկացնել երեխաների դաստիարակությանն ու կրթությանը, կուլտուրական հանգստին, կնպաստի նրանց բազմակողմանի զարգացմանը։

Սովետական ժողովրդի բարեկեցության աճի կարևոր ցուցանիշներից մեկը սոցիալական ապահովագրության, կենսաթոշակների և նպաստների, սովորողների թոշակների, անվճար ուսուցման, բուժսպասարկման, վճարովի արձակուրդների, դիշերօթիկ դպրոցների, մանկապարտեզների, մանկամսուրների, սանատորիաների, հանգստյան տների վրա պետության կատարած ծախսերի աճն է։

1958 թ. Հայկական ՍՍՌ-ում պետության այս ծախսերը կազմել են ավելի քան 1 միլիարդ ռուբլի։ 1965 թ. այդ նպատակների վրա կծախսվի մոտ 2 միլիարդ ռուբլի, կամ տարեկան 3800ռ. յուրաքանչյուր աշխատողի համար։ Եթե հաշվի առնենք նաև պետության ծախսերը բնակելի տների, դպրոցների ու կուլտուր-կենցաղային և բժշկական հիմնարկությունների վրա, ապա յուրաքանչյուր աշխատողին ընկնող պետական ծախսերը կկազմեն 5200 ռուբլի։ Ժողովրդի բարօրության օգտին նման ծախսեր չի կարող անել և ոչ մի կապիտալիստական պետություն։

Աշխատավորների բարեկեցության և կուլտուրական մակարդակի բարձրացման օգտին ձեռնարկված բոլոր այս միջոցառումները զգալիորեն բարձրացրել են բնակչության գնողունակությունը։ Ամեն տարի աշխատավորները ձեռք են բերում ավելի և ավելի շատ ապրանքներ։ 1958 թ. պետական և կոոպերատիվ առևտրի միջոցով ռեսպուբլիկայի բնակչությունը ձեռք է բերել 2 անգամ ավելի ապրանք, քան 1940 թ.։ Նույն ժամանակամիջոցում 1940 թ. համադրելի գներով պետական և կոոպերատիվ առևտրական օրգանների միջոցով ռեսպուբլիկայի յուրաքանչյուր շնչին վաճառվել է. միս և մսամթերքներ՝ 8,4, էնդռանական յուղ՝ 1,1, շաքար՝ 3,4, բրդյա գործվածքներ՝ 3,7 մետաքսյա գործվածքներ՝ 6,5 կաշվե կոշկեղեն՝ 2,2 անգամ ավել և այլն։

Ժողովրդական սպառման ապրանքների և բնակչության դրամական եկամուտների աճի հիման վրա պետական-կոոպերատիվ ապրանքաշրջանառությունը Հայկական ՍՍՌ-ում յոթնամյակի վերջում կավելանա 72,8%-ով (համադրելի գներով)։ Ըստ որում հատկանշական է այն հանգամանքը, որ գյուղական առևտրի աճման տեմպերը ռեսպուբլիկայում կգերազանցեն քաղաքային առևտրի աճի տեմպերին. յոթնամյակի ընթացքում ապրանքաշրջանառությունը գյուղում կավելանա 82%-ով, իսկ քաղաքում՝ 68%-ով։ Սա ելնում է գյուղական և քաղաքային բնակչության կենցաղային և կուլտուրական մակարդակը միմյանց մոտեցնելու ուղղությամբ պարտիայի և կառավարության վարած քաղաքականությունից և տանում է դեպի քաղաքի ու գյուղի միջև եղած էական տարբերությունների վերացումը՝ սոցիալիզմից կոմունիզմին անցնելու ժամանակաշրջանում։

1965 թ. ռեսպուբլիկայի բնակչությանը կվաճառվի ավելի շատ ապրանք, քան 1958 թվականին. անասնատնտեսական մթերքներ՝ 2 անգամ, շաքար և հրուշակեղեն՝ 1,8 անգամ, բանջարեղեն և մրգեր՝ 1,8 անգամ, գործվածքներ և կոշկեղեն՝ 1,7 անգամ, հագուստեղեն՝ 1,9 անգամ ավել։ Զգալիորեն կավելանա կուլտուր-կենցաղային ապրանքների, մասնավորապես կանանց տնային աշխատանքը թեթևացնող ապրանքների վաճառքը։ Ժողովրդի բարեկեցության հետագա բարձրացման նպատակով, յոթնամյա պլանում մեծ ուշադրություն է սևեռվելու հասարակական սննդի զարգացմանը, որին Վ. Ի. Լենինը չափազանց մեծ նշանակություն է տվել։ Դեռևս 1919 թ. «Մեծ նախաձեռնություն» հոդվածում հասարակական ճաշարանները, մանկամսուրների ու մանկապարտեզների հետ միասին Վ. Ի. Լենինը անվանել է կոմունիզմի ծիլերի նմուշներ, «...որոնք իրոք ընդունակ են ազատագրել կնոջը, իրոք ընդունակ են նվազեցնել և ոչնչացնել նրա անհավասարությունը տղամարդու հետ՝ հասարակական արտադրության և հասարակական կյանքի մեջ ունեցած դերի տեսակետից»[1]։

Հասարակական սննդի ձեռնարկությունների զարգացումը կնպաստի աշխատավորների կենցաղի հետագա վերակառուցմանը կոմունիստական հիմունքներով, կանանց կդարձնի անաբդյունավետ տնային աշխատանքներից, կնպաստի նրանց ակտիվ մասնակցությանը կոմունիստական շինարարության մեջ, ժողովրդական տնտեսության մեջ աշխատանքային և նյութական ռեսուրսների լավագույն օգտագործման գործին և աշխատանքի արտադրողականության աճին։ Յոթնամյակի ընթացքում հասարակական սննդի շրջանառությունը կավելանա համարյա 2 անգամ (մանրածախ գների իջեցման պայմաններում)։ Նախատեսվում է զգալիորեն ընդլայնել ասորտիմենտը և բարձրացնել սննդի որակը։ Միայն պետական կապիտալ ներդրումների հաշվին ռեսպուբլիկայում կկառուցվի հասարակական սննդի 450 ձեռնարկություն։

Յոթնամյա պլանով մեծ կապիտալ ներդրումներ են նախատեսվում քաղաքների և բանվորական ավանների քաղաքային և կոմունալ տնտեսության հետագա զարգացման համար։

Քաղաքների աճին ու բարեկարգմանը զուգընթաց ընթացիկ յոթնամյակում չտեսնված թափ է ստանալու բնակարանային շինարարությունը։ Դեռևս 1957 թ. Կոմունիստական պարտիան և Սովետական կառավարությունը առաջ քաշեցին առաջիկա 10—12 տարում երկրում բնակարանների պակասը վերացնելու խնդիրը։ Այս յոթնամյակում վճռական քայլ կարվի այդ համաժողովրդական խնդրի իրականացման ուղղությամբ։ Միայն կենտրոնացված պետական ներդրումների դեպքում ռեսպուբլիկայում բնակարանային շինարարությանը հատկացվելու է 3 միլիարդ սուբլուց ավելի կամ ժողովրդական տնտեսության զարգացման համար նախատեսված կապիտալ ներդրումների համարյա քառորդ մասը։ Սա 3 անգամ ավել է, քան ներդրվել է նույն նպատակի համար նախորդ 7 տարում։ Շինարարության արժեքի իջեցման հաշվին 4 անգամ ավելի բնակելի տարածություն կհանձնվի շահագործման, քան նախորդ 7 տարում։

Զգալիորեն կավելանա մասնավոր բնակելի տների կառուցումը, բանկային վարկի և անձնական գումարների միջոցով։ Քաղաքներում, բանվորական ավաններում և գյուղական վայրերում անհատները կկառուցեն 1,5 միլիոն քառակուսի մետր բնակելի տարածություն։ Բնակելի տների շինարարությունը կիրականացվի նաև ֆինանսավորման այլ աղբյուրների հաշվին։

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 29, Երևան, 1951, էջ 527։

Այսպիսով, յոթնամյակի ընթացքում ընդամենը կկառուցվի 4 միլիոն քառակուսի մետր բնակելի տարածություն։ Սրա շնորհիվ ռեսպուբլիկայի բնակարանային ֆոնդը համարյա 2 անգամ կավելանա։

Ընտանիքներին առանձին բնակարան հատկացնելու մասին Կոմունիստական պարտիայի առաջ քաշած խնդրին համապատասխան յոթնամյակի ընթացքում բնակարան կստանա ավելի քան 135 հազար ընտանիք։ Մոտակա տարիներին մեծ աշխատանք է տարվելու գյուղերի վերապլանավորման և հետագա բարեկարգման ուղղությամբ։ Կոլտնտեսությունների անբաժանելի ֆոնդերի աճը, պետական կապիտալ ներդրումներին զուգընթաց, հնարավորություն կտա ավելի ընդարձակել ակումբների և այլ կուլտուր-կենցաղային հիմնարկությունների, բժշկական հաստատությունների, դպրոցների, մանկապարտեզների և մանկամսուրների, գյուղատնտեսական հումքի վերամշակման միջկոլտնտեսային ձեռնարկությունների ցանցը, մեծ աշխատանք տանել գյուղերի կանաչապատման ու բարեկարգման և գյուղական միջկոլտնտեսային ճանապարհների կատարելագործման ուղղությամբ։

Կոլտնտեսային գյուղացիության եկամուտների նշանակալի աճը թույլ կտա մեծ չափերով ծավալել բնակարանային շինարարությունը այնպես, որ հնարավոր կարճ ժամանակամիջոցում ընդմիշտ վերջ տրվեն կավաշեն տներին, որոնք պահպանվել են որոշ գյուղերում նախահեղափոխական ժամանակներից։

Յոթնամյակի ընթացքում կոլտնտեսականների սեփական միջոցներով կկառուցվեն 85000 անհատական բնակելի տներ, որը կկազմի 2,5 միլիոն քառակուսի մետրից ավելի բնակելի տարածություն։

Սովետական երկրում, ուր ամենաթանկարժեք կապիտալը մարդն է, արվում է հնարավոր ամեն բան ժողովրդի կյանքի բարելավման համար։ Որքան մեր մեծ Հայրենիքը առաջ է գնում կոմունիզմի կառուցման ուղիով, այնքան մեծանում է մեզ մոտ հոգատարությունը բոլոր աշխատավորների բարեկեցության և առողջապահության նկատմամբ։

Առաջիկա յոթնամյակում ժողովրդական առողջապահության զարգացման համար մեծ և ուրախալի հեռանկարներ են բացվում։ Յոթ տարվա ընթացքում ռեսպուբլիկայի առողջապահության մեջ կապիտալ ներդրումները կկազմեն ավելի քան 280 միլիոն ռուբլի, այսինքն ավելի քան երկու անգամ կմեծանան անցած յոթնամյակի համեմատությամբ։

Կապիտալ ներդրումները հիվանդանոցային շինարարության մեջ կաճեն համարյա երեք անգամ, իսկ հիվանդանոցային մահճակալների թիվը՝ 1,7 անգամ։

Նշանակալիորեն կմեծանա բժիշկների և հատկապես բժշկական միջին կադրերի թիվը։ 1965 թվականի վերջերին բժշկական միջին անձնակազմը քսնակր կանցնի 15 հազարից, որը մի բժշկին հնարավորություն կտա ունենալ միջին թվով 3 բուժաշխատող բժշկական միջնակարգ կրթությամբ։

Աշխատող կանանց վիճակը թեթևացնելու և փոքրահասակ երեխաների խնամքն ու դաստիարակությունը բարելավելու համար ավելի քան երկու անգամ կընդլայնվի մանկապարտեզների և մանկամսուրների ցանցը։ Ընդ որում առանձնահատուկ ուշադրություն է դարձվում գիշեր ու ցերեկ աշխատող մանկապարտեզների քանակի մեծացմանը։

Մանկահասակ բնակչության սխտականխման և բուժողության հետագա բարելավման նպատակով նախատեսվում է մանկական հիվանդանոցների և մանկական կոնսուլտացիաներ ու պոլիկլինիկաներ ունեցող բաժանմունքների

ցանցի նշանակալի ընդլայնում։ Երջաններում կկառուցվեն մանկական կոնսուլտացիաների 28 շենքեր՝ կաթնախոհանոցներով և մանկական պոլիկլինիկաներով։ Միայն ընթացիկ տարում, նշված մանկական հիմնարկություններից կկառուցվեն Հրազդանում, Աշտարակում, Բասարգեչարում, Վեդիում, Մարտունիում, Նոյեմբերյանում, Սպիտակում, Թալինում և Դիլիջան քաղաքում։

Հայաստանը ունի իրենց արժեքով բացառիկ հանքային բուժիչ տաք ջրեր (ջերմուկներ) և կլիմայական առողջարաններ։ Առողջարանների մեջ հատուկ տեղ է դրավելու Ջերմուկ կուրորտը, որը տեղավորված է բարձր լեռնային գեղատեսիլ վայրում, ունի առաջնակարգ լեռնային կլիմա՝ առատ ուլտրամանուշակագույն ճառագայթների և հանքային տաք ջրերի մեծ քանակություն։ Յոթնամյակի ընթացքում կկառուցվեն մի շարք նոր, լավ կահավորված սանատորիաներ և հանգստի տներ։ Նախատեսված շինարարության իրականացման հետևանքով մահճակալների թիվը նրանցում կավելանա մեկ երրորդով։

Յոթնամյա պլանով նախատեսված տնտեսական և կուլտուրական շինարարության վիթխարի թափը ավելի է բարձրացնում աճող սերնդի դաստիարակության նշանակությունը, մի սերունդ, որը կոչված է կառուցելու կոմունիստական հասարակությունը։

Հետագա զարգացում է ստանալու դպրոցական կրթությունը։ Յոթնամյակի ընթացքում հանրակրթական դպրոցներում սովորողների թիվը կմեծանա մոտ երկու անգամ։

Առաջիկա յոթնամյակում մեծ զարգացում կստանան գիշերօթիկ դպրոցները, որոնք իրրև սովետական դպրոցի նոր տիպ, իրենց գոյության կարճ ժամանակամիջոցում ուսումնա-դաստիարակչական աշխատանքում և աշակերտների աշխատանքային պատրաստականության գործում հասել են ոչ փոքր հաջողությունների։ Նրանք անգնահատելի օգնություն են ցույց տալիս ծնողներին՝ նրանց երեխաների ուսման ու դաստիարակության գործում։ Գիշերօթիկ դպրոցների աշակերտների թիվը յոթնամյակի ընթացքում կաճի ավելի քան 13 անգամ։

Գիշերօթիկ դպրոցների օրինակով կկազմակերպվեն երկարացված օրվա խմբակներ և ամբողջ դպրոցներ, որտեղ աշակերտները դաստիարակների հսկողության տակ օգտակար ու նպատակահարմար կանցկացնեն իրենց ժամանակը՝ մինչև ծնողների աշխատանքից վերադառնալը։

Ներկայումս գնալով ավելի շատ տարածում են գտնում արտադրությունից չկտրված սովորողների համար տարբեր սիստեմի դպրոցները։ Կրթություն ստանալու այդ ուղին լիովին արդարացրել է իրեն և պահանջում է ամեն տեսակի աջակցություն։ Այդպիսի դպրոցներում սովորողների թիվը մշտապես պետք է աճի։ Բավական է նշել, որ այս յոթնամյակի ընթացքում բանվոր և գյուղական երիտասարդության դպրոցներում սովորողների թիվը կավելանա մոտավորապես 3 անգամ և կանցնի 38 հազարից։

Ընկ. Ն. Ս. Խրուշչովի նախաձեռնությամբ Կոմունիստական պարտիայի մշակած միջոցառումները՝ ողջ ժողովրդական կրթության սիստեմի արմատական բարելավման գծով նշանավորում են նոր փուլ սովետական դպրոցի զարգացման մեջ և լիովին համապատասխանում են մեր երկրի աճած պահանջներին՝ սոցիալիզմից կոմունիզմին անցնելու շրջանում։

Մեծ առաջնորդ և ուսուցիչ Վ. Ի. Լենինը կոմունիզմի կառուցումը սերտորեն կապում էր երիտասարդ սերնդի դաստիարակության, բազմակողմանի ուսուցման խնդիրների հետ։ Նա բազմիցս նշել է երիտասարդության ընդհա-

նուր ուսուցումը մեծահասակների արտադրողական աշխատանքի հետ կապելու անհրաժեշտություններ։

Միջնակարգ և բարձրագույն դպրոցի վերակառուցումը, որ անց է կացվում համաժողովրդական քննարկումից հետո Գերագույն Սովետի կողմից ընդունված «Կյանքի հետ դպրոցի կապի ամրապնդման և երկրում ժողովրդական կրթության սիստեմի հետագա զարգացման մասին» օրենքով, կնպաստի աճող սերնդի կոմունիստական դաստիարակությանը, կզարգացնի նրա մեջ կոլեկտիվիզմի, աշխատասիրության զգացում, կպատրաստի նոր՝ կոմունիստական հասարակության բարգավաճման զարգացած ակտիվ կառուցողներ։

Առաջիկա յոթնամյակում պետությունը նախատեսել է ռեսպուբլիկայի դպրոցների, գիշերօթիկ դպրոցների, հանրակացարանների ու մանկապարտեզների շինարարության համար հատկացնել ավելի քան 600 միլիոն ռուբլի։

Խոշոր հատկացումներ են նախատեսվում մասնագիտացված միջնակարգ և բարձրագույն ուսումնական հաստատությունների հետագա զարգացման համար։

Այդպիսի վիթխարի միջոցներ լուսավորության վրա կարող է ծախսել միայն ժողովրդական իշխանությունը։ Մինչհեղափոխությունը շրջանում պետական բյուջեի ծախսը Հայաստանի յուրաքանչյուր շնչի վրա կազմում էր ընդամենը 7 ռուբլի 69 կոպեկ։ Այդ շնչին միջոցներից ավելի քան 5 ռուբլին ծախսվում էր իշխանության մարմինների, ոստիկանության, բանակի, զինվորական և կատարային ծառայությունների վրա, իսկ ժողովրդական կրթության վրա ծախսվում էր միայն 39 կոպեկ։ Պետական այդ խղճուկ ծախսերը պերճախոս կերպով բնութագրում են ժողովրդական կրթության վիճակը նախասովետական Հայաստանում, ցույց են տալիս նաև, որ այն ժամանակ սովորել կարող էին միայն հարուստների երեխաները։

Յոթնամյակում մեր գիտության առաջ բացվում են հետագա ծաղկման գեղեցիկ հեռանկարներ։ Սովետական պետությունը հսկայական միջոցներ է հատկացնում և ստեղծում է բոլոր հնարավորությունները մեր գիտնականների արդյունավետ աշխատանքի համար։ Մայրական այդ հոգատարությանը պատասխանելով, իրենց ժողովրդին, իրենց հարազատ Կոմունիստական պարտիային անսահմանորեն նվիրված սովետական գիտնականները փառավորեցին մեր սոցիալիստական Հայրենիքը գիտական մեծագույն, համաշխարհային պատմական նշանակություն ունեցող հայտնագործություններով։

Սովետական գիտության այդ հոյակապ հաջողությունների մեջ, եղբայրական միութենական մյուս ռեսպուբլիկաների գիտնականների հետ միասին, արժանի ավանդ մատուցին նաև հայ գիտնականները։

Ներկայումս մեր ռեսպուբլիկայում կան 67 գիտահետազոտական հիմնարկություններ, որոնցում արդյունավետ կերպով աշխատում են ավելի քան երեք հազար գիտական աշխատողներ, այդ թվում 150-ից ավելի գիտության դոկտորներ և ավելի քան 1350 գիտության թեկնածուներ։

Հայաստանի գիտնականների առաջ խնդիր է դրված յոթնամյակում մշակել մի շարք հրատապ պրոբլեմներ, որոնք կարևոր նշանակություն ունեն ժողովրդական տնտեսության առանձին ճյուղերի, գիտության և կուլտուրայի զարգացման համար։ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի սիստեմում նախատեսվում է ստեղծել 12 նոր ինստիտուտներ և լաբորատորիաներ։ Այդ կապակցությամբ Գիտությունների ակադեմիայի գիտական աշխատող-

ների թիվը կկրկնապատկվի։ Նշված գիտական հիմնարկությունների կազմակերպման ու գիտական հետազոտությունների ընդլայնման ուղղությամբ, միայն Գիտությունների ակադեմիայի գծով հատկացվում է ավելի քան 200 միլիոն ռուբլի։

ՍՄԿՊ XXI համագումարի որոշումներում մեծ ուշադրություն է դարձված կուլտուր-լուսավորական հիմնարկությունների, ստեղծագործական միությունների աշխատանքի գաղափարական-գեղարվեստական մակարդակի բարձրացման, մեր բազմազգ երկրի ժողովուրդների մշակույթի հետագա ծաղկման ուղղությամբ։

Սոցիալիստական կուլտուրայի էությունը նրա խորապես ժողովրդային բնույթի մեջ է։ Ահա թե ինչու բոլոր ստեղծագործական հիմնարկությունների գործունեությունը պետք է ընթանա սովետական ժողովրդի ներկա կյանքի արտացոլման ուղիով։ Ռեսպուբլիկայի գրողները, դրամատուրգները, կոմպոզիտորները ներկայումս աշխատում են նոր ստեղծագործությունների վրա։ Ռեսպուբլիկայի նկարիչները և քանդակագործները պատրաստվում են 1960 թվականի համամիութենական գեղարվեստական ցուցահանդեսին և Սովետական Հայաստանի 40-ամյակին նվիրված ցուցահանդեսին։ Գրողների, կոմպոզիտորների, նկարիչների ստեղծագործությունները պետք է արտացոլեն ռեսպուբլիկայում Սովետական իշխանության տարիներին կատարված մեծագույն վերափոխումները, ցույց տան լավագույն մարդկանց, կոմունիզմ կառուցողների կերպարը։

Մեծ և դաստիարակչական պատասխանատու աշխատանք են տանում ռեսպուբլիկայի թատերական և երաժշտական կոլեկտիվները։

Լայն զարգացում կստանա աշխատավորների կինոսպասարկման գործը։ Յոթնամյակի ընթացքում կկառուցվի կինոստուդիայի նոր շենքը, որը հնարավորություն կտա գեղարվեստական կինոնկարների արտադրության թիվը 3-ի փոխարեն 7—8-ի հասցնելու, նշանակալիորեն ավելացնելու խրոնիկալ և դոկումենտալ կինոնկարների թողարկումը։

Արագ թափով պետք է զարգանա հրատարակչական գործը։ 1965 թվականին ռեսպուբլիկայում հրատարակվող գրքերի տպաքանակը հասցվելու է մինչև 10 միլիոնի, 1958 թվականին հրատարակված 7,3 միլիոնի փոխարեն։ Ամսագրերի տարեկան տպաքանակը կկազմի 2 միլիոն՝ 1958 թվականի 1,105 հազարի փոխարեն, լրագրերի միանվագ տպաքանակը կհասցվի 470 հազարի՝ 1958 թվականի 364,7 հազար օրինակի դիմաց։

Ռեսպուբլիկայում գրքերի, ամսագրերի ու լրագրերի հրատարակության վիթխարի աճը ակնառու դարձնելու համար հետաքրքրական կլինի տվյալներ բերել 1913 թվականից։ Այն ժամանակ Հայաստանում հրատարակվում էր ընդամենը 6 լրագիր 3,5 հազար միանվագ տպաքանակով, 2 ամսագիր տարեկան 1 հազար տպաքանակով. լույս է ընծայվել ընդամենը 55 անուն գիրք՝ 80 հազար տպաքանակով։

Յոթնամյա պլանով նախատեսված է անհրաժեշտ միջոցների հատկացում հայերեն տառատեսակների բարելավման և նորերի ստեղծման, գունավոր տպագրության և գրքերի գեղարվեստական ձևավորման համար։

Յոթնամյակի ընթացքում կկառուցվեն նոր շենքեր Գ. Սունդուկյանի անվան պետական դրամատիկական թատրոնի, Ա. Մյասնիկյանի անվան ռեսպուբլիկական գրադարանի գրապահոցի, հեռուստատեսության ստուդիայի, տպարանների համար և այլն։

1959 թվականին ավարտվեց և շահագործման հանձնվեց Մատենադարանի նոր մեծ և գեղեցիկ շենքը, ուր պահվում են ավելի քան 13 հազար բացառիկ արժեք ունեցող հին ձեռագրեր, որոնք համաշխարհային նշանակություն ունեցող գանձեր են։

Ժողովրդական տնտեսության և կուլտուրայի զարգացման գործում մեր երկրի ունեցած վիթխարի հաջողություններն ու ավելի մեծ հեռանկարները, ժողովրդի բարեկեցության բարձրացումը սովետական մարդկանց ոգևորում է նոր սխրագործությունների։

Սովետական Միության ժողովուրդները, միավորված եղբայրական միասնական ընտանիքում, անխզելի բարեկամական կապերով կապված, ոգեշնչված ՍՄԿՊ XXI համագումարի որոշումներով, լի են կոմունիզմը կառուցելու վճռականությամբ։ Համագումարի նախագծած կոմունիստական շինարարության վիթխարի ծրագիրը, անտարակույս, կիրագործվի։ Դրա երաշխիքն է ժողովրդի և պարտիայի անխախտ միասնությունը, սովետական ժողովրդի մարտական և փորձված կազմակերպչի ու առաջնորդի՝ Կոմունիստական պարտիայի իմաստուն ղեկավարությունը։

Ստեղծագործորեն մոտենալով կոմունիստական շինարարության խնդիրների լուծմանը, խորհրդակցելով ժողովրդի հետ, հենվելով նրա խելքի ու հարուստ փորձի վրա, Կոմունիստական պարտիան մեր ժողովրդին անշեղորեն առնում է լենինյան ուղիով, իր իմաստուն ցուցումներով ու որոշումներով լուսավորելով սովետական ժողովրդի հաղթական ուղին։

ՍՄԿՊ XXI համագումարի որոշումները, ՍՄԿՊ Կենտրոնական Կոմիտեի առաջին քարտուղար Ն. Ս. Խրուշչովի զեկուցումը համագումարում փայլուն օրինակ են մարքսիզմի ստեղծագործական զարգացման, կոմունիստական շինարարության պրակտիկայի, միլիոնավոր մասսաների փորձի հետ տնտեսության ունեցած սերտ կապի։

Այդ կարևորագույն փաստաթղթերը պատմական նշանակություն ունեն։

Հայաստանի աշխատավորները, ինչպես և ողջ սովետական ժողովուրդը, մեծագույն ուրախությամբ ու հիացմունքով դիմավորեցին ՍՄԿՊ XXI համագումարի որոշումները։ Համագումարի որոշումներում նրանք տեսնում են իրենց նվիրական խոհերն ու ակնկալությունները, իրենց կենսական շահերը։ Իր ջերմ սերն ու վստահությունը պարտիային, պատրաստակամությունը՝ կատարելու նրա իմաստուն ցուցումներն ու նախագծումները, հայ ժողովուրդը արտահայտում է հերոսական աշխատանքով ի բարօրություն մեր մեծ Հայրենիքի ծաղկման։

Լենինյան անհաղթելի դրոշի ներքո Հայաստանի աշխատավորները սովետական բոլոր ժողովուրդների միասնական եղբայրական ընտանիքում վստահորեն գնում են առաջ դեպի կոմունիզմի շողշողուն գագաթները։

СЕМИЛЕТКА—РЕШАЮЩИЙ ШАГ ПО ПУТИ ПОДЪЕМА ЭКОНОМИКИ И КУЛЬТУРЫ АРМЕНИИ

А. Е. КОЧИНЯН

(Резюме)

За годы социалистического строительства в Армении создана мощная многоотраслевая промышленность, оснащенная современной техникой. Высокого уровня достигла многовековая культура армянского народа.

Утвержденный XXI съездом КПСС план развития народного хозяйства на 1959—1965 годы открывает перед всеми союзными республиками новые светлые и радостные перспективы дальнейшего развития. Семилетний план является программой развернутого строительства коммунистического общества в нашей стране.

Промышленность Армянской ССР в течение семилетки, в соответствии с местными сырьевыми и трудовыми ресурсами и сложившимися особенностями, будет специализироваться на развитии производства цветных металлов, синтетических химических продуктов и неметаллоемкого точного машиностроения и приборостроения. В 1965 году промышленность Армении будет выпускать продукции в 2,3 раза больше, чем в 1958 году. Значительно увеличится производство продуктов легкой и пищевой промышленности.

Большие задачи поставлены также перед тружениками сельского хозяйства Армении. В результате осуществления семилетнего плана Армянская ССР превратится в республику высокоразвитого виноградарства, плодоводства, животноводства, табаководства и овощеводства.

Прекрасные перспективы дальнейшего расцвета открываются в семилетке перед нашей наукой и культурой, искусством и литературой.

Трудящиеся Армении, как и весь советский народ, полны решимости выполнить и перевыполнить грандиозную программу коммунистического строительства и своим героическим трудом способствовать еще большему процветанию нашей Великой Родины. Гарантией тому является нерушимое единство народа и партии, их несокрушимая воля к победе коммунизма, мудрое руководство великой Коммунистической партии — боевого и испытанного руководителя советского народа.